բան, որք աւետարանեն զօրութե̃
բազմաւ ։

Թագաւոր զօրուե̃ց սիրելւոյ· գե֊
ղեցկութիւն տան քո բաժանեալ
յաւարի· թէպէտ՝ և ննջեսջիք 'ի
մէջ վիճակաց ։

Թևք աղաւնւոյ արծաթապատ· և
թիկնամէջ նր̃ 'ի դոյն ոսկւոյ ։

'Ի դուամարել երկնաւորին զթ̃ւրս
'ի վ̃ր նր̃, ձիւնացին 'ի սաղմոն ։

Լեառն

Լեառն ա̃յ լեառն պարարտ. լեառն
մածեալ լեառն պարարտ. և զի՞նչ
կարծէք լերինք հաստատեալք։

Լեառն, է̃ որ հաճեցաւ ա̃ծ բնա-
կել ՚ի նմա. քանզի և տ̃ր իսկ բնա-
կեսցի ՚ի նմա իսպառ։

Կառք ա̃յ բիւրապատիկք. հազարք
ուղղիչք, և տ̃ր ՚ի նո՝ ՚ի սինէ սրբ-
ութեան իւրոյ։

Ել ՚ի բարձունս՝ և գերեաց զգե-
րութիւն. էառ աւար՝ բաշխեաց պար-
գևս՝ և ետ որդւոց մարդկան. քան-
զի՛ թերահաւատից ևս բնակեալ
եղիցին ՚ի նմա։

Տ̃Ր ա̃ծ օրհնեալ՝ օրհնեալ տ̃ր՝ զօր
հանապազ առաջնորդեսցէ մեզ ա̃ծ
փրկիչ մեր։

Ա̃Ծ մեր, ա̃ծ կենարար. և ՚ի տ̃նէ
են ելք մահու։

Բայց սակայն՝ ա̃ծ փշրեսցէ ըզ-
գլուխս թշնամեաց մերոց. և ըզ-
հերան կարճնոլին, որք գնան յա-
նօրէնութեան իւրեանց։

Ասաց տ̃ր ՚ի խորոց անդնդոց դար-
ձուցից. և ՚ի միջոյ ժանեաց զայն
՚ի դուրս կորզեցից։

Մի՛ Թացցի ոտն քո յարեան․ և լե–
զուք շանց քոց ՝յարենէ Թշնամեաց
քոց ։

Երևեցան գնացք քո ած․ գնացք
այ Թագաւորին մերոյ սբյ ։

Կանխեցին իշխանք հանել զօրհնու–
Թի, ՚ի մէջ կուսանաց և գովչաց ։

Յեկեղեցիս օրհնեցէք զած․ և զտր
յաղբերացն իսրայելի ։

Անդ բենիամին ՚ի տղայուԹե զար–
մանալի, իշխանք յուդայ առաջ–
նորդք նց՝ իշխանք զաբուղոնի, և
իշխանք նեփԹաղիմայ ։

Հրամայեա ած զօրուԹ քով․ զօրա–
ցո՛ զայս, զոր հաստատեցեր ՚ի մեզ ։

՚Ի տաճարէ քումմէ յերուսաղեմէ ․
քեզ մատուսցեն Թագաւորք զպա
տարագս ։

Սաստեա ՚ի գազան եղեգան․ ՚ի ժո
ղով զուարակաց՝ և ՚ի գառս երն–
ջոց ։

Խոտեսցին այնոքիկ՝ որք ընտրեալք
են արծաԹով․ ցրուեա զհեԹանոսս՝
որք կամին ընդ պատերազմ ։

Եկեսցեն հրեշտակք յեգիպտոսէ․
հնդիկք յառաջագոյն ձեռնտու–

լի–

ըսցին առ ած։
Թագաւորութիւնք երկրի օրհնեցէք
զած. և սաղմոս ասացէք տն։
Ճանապարհ արարէք այնմիկ. որ
նստի յերկինս երկնից ընդ յարևելս։
Նա տացէ զձայն իւր ՚ի ձայն զօ-
րութեան. և տուք զփառս տն։
Ի վերայ իէլի մեծ վայելչութիւն նորա. և
զօրութիւն նորա մինչև յամպս երկնից։
Սքանչելի է ած ՚ի մէջ սրբոց իւրոց՝
ած իսրայելի։
Նա տացէ զզօրութիւն հաստատութեան
ժողովրդեան իւրոյ. օրհնեալ է ած։

Ի կատարած Սաղմոս Դաւթի, վասն
փոփոխելոցն. ԿԸ։

Հայր խօսի ՚ի բերանոյ քի ՚ի ժամու չար-
չարանաց նորին չարծրագործանաց։

Կեցո զիս ած, զի հասին ջուրք
յանձն իմ. ընկղմեցայ ես ՚ի խորս
անդնդոց. ուր ոչ գոյ ինձ
հանգիստ։
Եկի ես ՚ի խորս ծովու. և շրջանք
ընկղմեցին զիս։
Վաստակեցայ ես առ աղաղակել.
և

և կերկերեցաւ կոկորդ իմ։
Նուաղեցան աչք իմ, առ յուսալ
ինձ առ Տր̃ Ած̃ իմ։
Բզմ̃ եղեն քան զհեր գլխոյ իմոյ․
որք ատեին զիս ՚ի տարապարտուց։
Զօրացան յիս թշնամիք իմ և ա-
տեցեալք իմ ՚ի նանիր․ ինչ զոր ոչ
յափշտակեալ էի՝ տուժէի նց̃։
Ած̃ դու ծանեար զանզգամութ̃ի
իմ․ և յանցանք իմ ՚ի քէն ոչ ծած-
կեցան։
Մի՛ ամաչեսցեն վս̃ իմ, որք համբե-
րեն քեզ Տր̃ Տր̃ զօրութեանց՝ մի՛ պատ-
կառեսցին վս̃ իմ, որք խնդրեն զ
քեզ Ած̃ իսրայէլի։
Վս̃ քո համբերի նախատանաց, և
ծածկեաց ամօթ զերեսս իմ։
Օտար եղէ ես յեղբարց իմոց․ և
հիւր որդւոց մօր իմոյ։
Նախանձ տան քո եկեր զիս․ և
նախատինք նախատչաց քոց ան-
կան ՚ի վերայ իմ։
Խոնարհեցուցի պահօք զանձն իմ,
և եղեն ինձ այս նախատինք․ արա-
րի զհանդերձս իմ քուրձ, և եղէ
յառակ նց̃։

Զի

Զինէն խորհէին, որք նստէին առ դրունս. և զիս այպն առնէին, որք ըմպէին զգինի։

Ես յաղօթս կայի առ քեզ տ̃ր. ՚ի ժամանակի ընդունելի։

Ա՛ծ ՚ի բազում ողորմութ̃ե քում՝ լուր ինձ. ՚ի ճշմարտութ̃ե փրկութ̃ե քո։

Ապրեցո՛ զիս ՚ի կաւոյ՝ զի մի՛ ընկ-ճայց. ապրեցայց ես յատելեաց ի-մոց. և ՚ի խորոց ջուրց բազմաց։

Մի՛ ընկլուցեն զիս պտոյտք ջուրց. և մի՛ ընկղմեսցեն զիս անդունդք խորոց. և ջրհոր մի՛ կափուսցէ զբե-րան իւր ՚ի վերայ իմ։

Լուր ինձ տ̃ր, զի քաղցր է ողորմու-թ̃ի քո. ըստ բազում գթութեան քում՝ հայեա՛ց յիս, և մի՛ դարձու-ցաներ զերեսս քո ՚ի ծառայէ քումմէ, զի նեղեալ եմ ես, վաղ-վաղակի լուր ինձ։

Հայեա՛ց յանձն իմ, և փրկեա՛ զիս. և վ̃ս թշնամեաց իմոց ապրեցո՛ զիս։

Զի դու գիտես զնախատինս իմ, զամօթ իմ, և զպատկառանս իմ։

Առաջի քո են ա̃մ նեղիչք անձին իմոյ. նախատանաց համբերեր սիրտ

 իմ,

իմ, և թշուառութիւն։
Ակն ունէի՝ թէ որ տրտմեսցի ընդ
իս, և ոչ որ էր. և մխիթարիչ ինձ
որ ոչ գտաւ։
Ետուն 'ի կերակուր ինձ զլեղի. և
'ի ծարաւ իմ արբուցին ինձ զքա-
ցախ։
Եղիցին սեղանք նց առաջի նց յո-
րոգայթ. 'ի հատուցումն, և 'ի գայ
թակղութի։
Խաւարեսցին աչք նց, զի մի տես-
ցեն. և զթիկունս նց հանապազ
կորացո։
Հեղցես 'ի վր նց զբարկութի քո.
սրտմտութի բարկութե քո հաս-
ցէ 'ի վերայ նց։
Եղիցին բնակութիւնք նց աւերակ. և
'ի յարկս նց մի ոք իցէ՝ որ բնակիցէ։
Զի զոր դու հարեր, հալածեցին.
և 'ի վէրս ցաւոց իմոց յաւելին։
Դիր զմեղս 'ի վերայ մեղացնց. զի
մի մտցեն յարդարութի քո։
Ջնջեսցին նոքա 'ի դպրութենէ
քումմէ կենաց. և ընդ արդարս
քո մի գրեսցին։
Աղքատ և ցաւած եմ ես. փրկու-

թէ քո տէր ընկալցի զիս ։

Օրհնեցից զանուն ա̃յ իմոյ օրհ-նութեամբ. և բարձր արարից զնա գո-վութեամբ ։

Հաճոյ եղիցի ա̃յ քան զորթ մա-տաղ. որ բերէ զեղջիւրս և զկճղակս

Տեսցեն աղքատք և ուրախ եղի-ցին. խնդրեցէք զա̃ծ, և կեցցեն անձինք ձեր ։

Զի լուաւ տր̃ աղքատաց. և զկա-պեալս իւր ոչ արհամարհեաց ։

Օրհնեսցեն զնա երկինք և երկիր ծով, և ամ̃ որ զեռայ 'ի նմ̃ ։

Զի ա̃ծ փրկէ զսիոն. շինեսցին քա-ղաքք հրէաստանի. շինեսցեն բնա-կեսցին և ժառանգեսցեն զնա ։

Զաւակ ծառայից քոց հաստա-տեսցի անդ. և որք սիրեն զանուն քո, բնակեսցին 'ի նմա ։

Ի կատարած Սաղմոս Դաւթի. առ 'ի յի-շատակ փրկելոյն զնա տն. ԿԹ ։
Աղօթս խօսի պնդորդչանէ, որք գուշակ 'ի հրաւ-կի խնդրեն օգնութեն յա̃յ ։

Ա̃Ծ յօգնել ինձ նայեաց. և տր̃ յընկերել ինձ փութա ։

Ամա-

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք
խնդրեն զանձն իմ· դարձցին յետս
և ամաչեսցեն, որք խորհին ինձ չար։
Դարձցին առժամայն ամաչեցեն·
որք ասեն ինձ վաշ վաշ։
Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ
ամենեքեան որք խնդրեն զքեզ Տր։
Ասասցեն յամ ժամ, մեծ է Տր·
որք սիրեն զփրկութիւն քո։
Ես աղքատ և տնանկ եմ, Տր օգ_
նեա ինձ· օգնական և փրկիչ իմ
ես դու· Տր իմ մի յամեներ·

Սաղմոս Դաւթի, որդւոյն յովնադաբայ·
և յառաջնոյ գերութեան · ՀԱ։

Այս խօսք Քնէ, որ 'ի ձերբակալութենէ
չարչարանս աղօթէ առ Տր, և հայցէ
օգնութիւն։

Ի քեզ Տր յուսացայ, մի ա_
մաչեցից յաւիտեան · յար_
դարութեն քում փրկեա զիս
և ապրեցո զիս։
Խոնարհեցո առ իս զունկն քո և
կեցո զիս։
Եր իմ Տր ապաւէն, և տեղի ա_


մուր

մուր կեցուցանել զիս . զի հաստա-
տութիւն իմ՝ եւ ապաւէն իմ դու ես ։
Ա՛ծ իմ, փրկեա՛ զիս ՚ի ձեռաց մե-
ղաւորի . ՚ի ձեռաց անօրինի եւ ա-
նիրաւի ։
Դու ես համբերութիւն իմ տէր տէր
յոյս իմ՝ ՚ի մանկութենէ իմմէ ։
Ի քեզ հաստատեցայ ես յարգան-
դէ . յորովայնէ մօր իմոյ դու ես
ապաւէն իմ . եւ առ՚ի քէն է օրհնու-
թիւն իմ՝ յա՛մ ժամ ։
Որպէս զի նշանակ եղէ ես բազմաց . եւ
դու օգնական իմ՝ եւ հզօրիչ իմ ։
Լցի բերան իմ՝ գովութեամբ, որպէս օրհ-
նեցից զփառս քո . զոր հանապազ
զմե՛ծ վայելչութիւն քո ։
Մի՛ ընկենուր զիս տէր ՚ի ժամանակս
ծերութեան . ՚ի պակասել զօրութեան
իմոյ մի՛ թողուր զիս ։
Ասացին թշնամիք իմ ինձ . եւ որք
պաշարեցին զանձն իմ . խորհեցան
՚ի միասին եւ ասացին ։
Ա՛ծ եթող զնա, հալածեցուք եւ
հասցուք նմա . զի ոչ ոք է որ փրկէ
զնա ։
Ա՛ծ իմ, մի՛ հեռի առնիր յինէն .
եւ

եւ Ած յօգնել ինձ նայեա՛ ։
Ամաչեսցեն եւ պակասեսցին՝ որք
չարախօս կային զանձնէ իմմէ · ըզ
գեցցին զամօթ եւ զպատկառանս ,
որք խնդրէին ինձ չար ։
Եւ ես յամ ժամ յուսացայց · եւ յա-
ւելից յօրհնութիւնս քո ։
Բերան իմ պատմեսցէ զարդարու-
թիւն քո · զօրհանապազ զգովու-
թիւն քո ։
Զի ոչ թէ խարդախութիւն ինչ գի-
տէի ես զդպրութիւն · այլ մտից 'ի
զօրութիւնս Տն · Տր յիշեցի զարդա-
րութիւնս քո միայն ։
Ած իմ, ուսուցեր զիս 'ի մանկու-
թենէ իմմէ · եւ ցարդ եւս պատմեցից
զարդարութիւնս քո ։
Մինչեւ յալեւորիլ եւ 'ի ծերանալ
իմում · Ած իմ մի թողուր զիս ։
Մինչեւ պատմեսցի բազուկ քո՝ ազ-
գի ամի որ գալոցն է ։
Զօրութիւնս քո եւ զարդարութիւնս
քո, մինչեւ 'ի բարձունս · զոր արա-
րեր մեծամեծս · Ած ո՞ նմանի քեզ ։
Որչափ ցուցեր ինձ զնեղութիւն բա-
զում եւ չարչարանս՝ դարձար եւ

 մխի-

մխիթարեցեր զիս. և՛ի խորոց ան-
դնդոց երկրէ հաներ զիս։
Յաճախեցեր զզօրութիւն քո. և դար-
ձեալ մխիթարեցեր զիս. և՛ի խո-
րոց երկրի միւսանգամ՝ հաներ զիս։
Արդ՝ և ես խոստովան եղէց քեզ՝ի
սպասաւորութիւն սաղմոսաց, ճշմա-
րիտդ ա̃ծ. սաղմոս ասացից քեզ
օրհնութ̃ ի̃ սրբդ իսրայէլի։
Ցնծասցեն շրթունք իմ յորժամ
սաղմոս ասիցեմ քեզ. և անձն իմ
զոր փրկեցեր։
Այլ և լեզու իմ զօրհանապազ
խօսեսցի զարդարութիւն քո։
Ի ժամանակի իբրև յամօթ լիցին
և ամաչեսցեն որք խնդրեն ինձ ըզ
չար։

Ի Սաղմոսն։
Սաղմոս Դաւթի. Հ̃Ա.
Աղաւթ հայցէ յԱ̃յ զխաղաղութեան գալստեան
Մեսիային, և փառաւորէ զերջանկութի̃
արքայութե̃ նր̃։

Ա̃Ծ զիրաւունս քո արքայի տուր,
և զարդարութիւն քո որդւոյ
թագաւորի։

Դա-

Դատել զժողովուրդս քո արդարութ՟. և զաղքատս քո իրաւամբք։

Առցեն լերինք զխաղաղութի՟ ժողովրդեան. և բլուրք զարդարութի՟.

Իրաւ արասցէ աղքատաց ժողովրդեան, և կեցուսցէ զորդիս տնանկաց. և խոնարհեցուսցէ զամբաստանս։

Կացցէ և մնասցէ ընդ արևու, յառաջ քան զլուսին յազգս մինչև յազգս։

Իջցէ ո՟պ զանձրև ՚ի վ՟ր գեղմանց. ո՟պ զցօղ շի ցօղի յերկիր։

Ծագեսցի յաւուրս ն՟ր արդարութի՟, բազում խաղաղութի՟. մինչև կատարեսցի լուսին։

Տիրեսցէ նա ՚ի ծովէ մինչև ՚ի ծով. ՚ի գետոց մինչև ՚ի ծագս աշխարհի

Առաջի ն՟ր նախ հնդիկք անկցին. և թշնամիք ն՟ր զհող լիզցեն։

Թագաւորք Թարսսի և կղզեաց՝ պատարագս մատուսցեն նմա. Թագաւորք Արաբայ և Սաբայ, պատարագս բերցեն նմա։

Երկիր պագցեն նմ՟ ա՟մ թագաւորք երկրի. և ա՟մ ազգք ծառայեսցեն նմ՟

Զի փրկեաց զաղքատն ՚ի հզօրէ. զաղքատն եւ զտնանկն՝ որոյ ոչ է օգնական։

Խնայեսցէ նա յաղքատն եւ ՚ի տընանկն. եւ զանձինս տնանկաց կեցուսցէ. ՚ի վաշխից եւ ՚ի չարեաց փրկեսցէ զանձինս նոցա։

Պատուական է անուն նոցա առաջի նորա. կեցցէ, եւ տացի նմա յոսկւոյն արաբացւոց։

Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ. եւ զօրհանապազ օրհնեսցեն զնա։

Եղիցի հաստատութիւն ընդ ամենայն երկիր. եւ ՚ի վերայ գլխոյ լերանց։

Բարձրասցի քան զլիբանան պըտուղ նորա. ծաղկեսցի ՚ի քաղաքի ան ոն խոտ երկրի։

Եղիցի անուն նորա օրհնեալ յաւիտենս. զի յառաջ քան զարեւ է անուն նորա։

՚Ի նա օրհնեսցին ամենայն ազգք երկրի. եւ ամենայն ազինք երանեսցեն նմա։

Օրհնեալ տէր աստուած Իսրայէլի որ առնէ զքանչելիս միայն. եւ օրհնեալ է անուն փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք նորա ամենայն երկիր. եղիցի եղիցի.

Աղօթք աննայի մօրն սամուէլի։ ԱՀաւղ
Ներբորդ Թագաւորաց • Բ։

Հաստատեցաւ սիրտ իմ 'ի
տր • եւ բարձրացաւ եղջեւր
իմ յած փրկիչ իմ։
Ընդարձակեցաւ բերան իմ
'ի վերայ թշնամեաց իմոց • ուրախ
եղէց 'ի փրկութեն քում։
Զի ոչ գոյ սբ ոպ զտր • եւ ոչ ար
դար ոպ զած մեր • եւ չիք սբ բաց
յոյ մերմէ ։
Մի պարծիք եւ մի խօսիք զամբար
տաւանս • եւ մի ելցէ ընդ բերանս
ձեր բան հպարտ մեծաբանութե ։
Ած գիտութեց տր ած պատրաս_
տէ իւրով խնամութբ զգիտութի
յարարածս իւր ։
Զօրաց հաստ աղեղունք թուլա_
ցան, եւ տկարք վառեցան զօրութբ ։
Յագք եւ լիք հացիւ, նուաղեցան •
եւ քաղցեալք լցին զերկիր •
Ամուլն ծնաւ եօթն • եւ բազմա_
ծնինն նուաղեաց 'ի ծննդոց ։
Տր մեռուցանէ, եւ տր կեցուցանէ •
իջուցանէ 'ի դժոխս եւ հանէ ։

Տ՟ր աղքատացուցանէ և տ՟ր մեծա ցուցանէ. խոնարհ առնէ զամբարտաւանս մինչև յերկիր, և բարձր առնէ զտառապեալս յաղբեաց։
Նստուցանէ զն՟ա իշխանս՝ ընդ իշխանս ժողովրդեան. և զաթոռ փառաց ժառանգեցուցանէ նմ՟ա։
Սատարէ զուխտս ուխտաւորաց. և օրհնեաց զամս արդարոց։
Զի ոչ թէ իւրով զօրութ՟բ զօրանայ հզօր, այլ տ՟ր տկար առնէ ըզ հակառակորդս իւր. տ՟ր ս՟բ է։
Մի՛ պարծեսցի խորհրդականն ՚ի խորհուրդս իւր. մի՛ պարծեսցի հըզօրն ՚ի զօրութ՟ն իւր. և մի՛ պարծեսցի մեծն ՚ի մեծութ՟ն իւրում։
Այլ որ պարծին, ՚ի տ՟ր պարծեսցի. ՚ի խորհուրդս գիտութ՟ն զտ՟ր ճանաչել։
Առնել զիրաւունս, և գործել զարդարութ՟ի, ՚ի մ՟ջ երեսաց երկրի
Տ՟ր ել յերկինս՝ և որոտաց. և ինքն դատէ առանց բարբառելոյ։
Տայ զզօրութ՟ի թագաւորաց մերոց. և բարձր առնէ զեղջիւր օծելոյ իւրոյ։

Առ-

### Աղօթք։

Բարձրացաւ եղջիւր իմ յԱծ փր
կիչ իմ. հաստատեցաւ սիրտ իմ
'ի Տր տէրամբ և հաւատով։
Մարդասէր Տր վս սրբուհւոյ անա
րատ մօր քոյ և կուսի. և վս խա_
չի քո պատուականի ընկալ զաղա
չանս մեր և կեցո՛ զմեզ։

Քարոզ ողորմութեան, և 'ի նեղութենէն։

Վս գտանելոյ մեզ զշնորհս և զո_
ղորմութի 'ի բարերար Տնէ
մերմէ, զՏր աղ.
Վս փրկելոյ զմեզ 'ի զրպարտութե
մարդկան՝ և յորոգայթից սատա_
նայի, զՏր աղ.
Վս ամ անձանց քրիստոնէից. և
տանց հաւատացելոց, զՏր.
Վս որք 'ի լերինս յայրս և 'ի փա_
պարս բնակեալք են սբ հարքն
մեր, զՏր.
Վս որք սաղմոսիւք և օրհնութե
կատարեն զամենայն ժամանակս
կե_

կենաց խուրեանց, զոր ասէ
Ս̃ր հոգւոյն հանգուցելոյ՝ որք։
Նու եւ և վ̃ միաբանութեն ճշմարիտ
Զամենին։ Ողորմեայ։

Աղօթք։

Գոհանամք զքէն տէր ած մեր, որ զարթուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութե քո։ Զարթո՛ զմիտս մեր արդարութեան քեզ տէր ած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութի քո։ Նկեսցէ և բնակեսցի առ մեզ ածութի քո. և ողորմութի քո հովանի և պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ՝ զծառայս քո արժանի արա 'ի տուէ և 'ի գիշերի և յամ ժամու, միշտ խորհել 'ի սէր պատուիրանաց քոց։ Եւ՛ գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զս̃բ հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Խա-

Յաղաղակելէ ամենեցուն :

Կենդանարար զօրութիւն և աղբիւր անմահութեան, դու ես քրիստոս աստուած փրկիչ մեր: Որ շնորհեցեր մեզ ՚ի մէջ գիշերի յառնել՝ և խոստովան լինել առ քեզ՝ վասն իրաւանց և արդարութեան քո: Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր աստուած մեր, արա զմեզ արթունս և պատրաստս ՚ի ժամ առաւօտու երեւման քո: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ՝ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Գոհութիւն, և ճշմարիտ խոստովանութիւն անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զսուրբ հոգին, այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Աղ.



Իջուցանին տն̃ ի խաչէն։

## Սաղմոս Ասափայ. ՀԲ։

Աստ լուծանէ զտարակուսանս թէ զի՞_
արդ եղեն յաշխարհի յայսմիկ յաջո_
ղութիւնք մեղաւորաց, և տա_
ռապանք արդարոց։

ՈՐՊԷՍ ԲԱՐԻ
Է ԻՍՐԱՅԷԼԻ
ած, որք ուղիղ են սրտիւք։
Բայց զի իմ փոքր մի եւ սասա_
նեալ էին ոտք. սակաւիկ մի եւ՝ գայ
թագղեալ էին գնացք իմ։
Նախանձեցայ ես ընդ անօրէնս. զխա
ղաղութիւն մեղաւորաց, տեսանէի,
զի ոչ գոյր վերջ մահու նոցա։

Հաս_

Հաստատուն են տանջանք նց · 'ի
վաստակս մարդկան չեն նոքա · և
ընդ մարդկան ոչ տանջեսցին ։
Վն՝ կալաւ զնս ամբարտաւանու
թի · արկին զիւրեամբք զամբարշ
տութի, և զանիրաւութի իւրեանց ։
Ելցէ որպէս 'ի ճարպոյ անիրաւու
թի նց · զի գնացին նոքա ըստ խոր
հրդոց սրտից իւրեանց ։
Խորհեցան և խօսեցան զչարութի
և զանիրաւութիւն 'ի բարձունս
խորհեցան ։
Եդին յերկինս զբերանս իւրեանց ·
և զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ
Վն այսորիկ ժողովուրդ իմ դարձ
ցի այսրէն · և աւուրք իմ լի կատա
րեալ գտցին 'ի նս ։
Ասացին՝ զիարդ գիտաց ած · կամ
դուցէ՞ արդեօք գիտութիւն առ 'ի
բարձրելոյն ։
Ահա մեղաւորք են և յաջողեալ է
նց · կան՝ և ունին զմեծութի յփ ։
Ասացի՝ զուր ուրեմն արդարացու
ցի զսիրտ իմ · լուացի սրբութբ
զձեռս իմ · և եղէ ես խոշտան
կեալ զօրհանապազ · և կշտամ

 բանք

բանք իմ՛ ընդ առաւօտս ։
Խնդրեմ և սաստիկ՝ թէ այսմ պատ
մեցից ․ անհաւատիկ ազգ որդւոյ
քոց որոց և ուխտեցի ։
Ի մտի եդի , թէ սակայն և այս
ջան է առաջի իմ՛, մինչև մտից ՚ի
սրբութի՛ն նոյ ․ և ՚ի միտ առից զկա
տարած նց ։
Սակայն վ՛ն նենգութե՛ն նց տարա_
գիր արարեր զնս ․ և կործանեցեր
զնս յամբարտաւանութե՛ իւրեանց ։
Իսկ զիարդ եղեն յաւեր՝ յանկար_
ծակի սատակեցին ․ պակասեցան՝ կո
րեան վ՛ն անօրէնութե՛ իւրեանց ․ և ե_
ղեն որպ երազք զարթուցելոց ։
Տ՛Ր ՚ի քաղաքի քում՛ զպատկերս նց
անարգեսցես ․ զի հուր բորբոքե_
ցաւ ՚ի սրտի իմում ․ և երիկամունք
իմ՛ այլագունեցան ։
Ես արհամարհելի եղէ , և ոչ գիտա_
ցի ․ որպէս անասուն համարեցայ առա
ջի քո , և ես յամ՛ժամ՛ ընդ քեզ եմ ։
Կալար զաջոյ ձեռանէ իմմէ ․ ՚ի խոր
հուրդս քո առաջնորդեցեր ինձ ․ և
փառօք ընկալար զիս ։
Զինչ կայ իմ՛ բնաւ յերկինս , կամ

'ի քէն զի՞նչ կամ խնդրեցից յերկրի։
Նուաղեցաւ սիրտ իմ և մարմին իմ. ա՟ծ սրտի իմոյ, բաժին իմ ա՟ծ յաւիտեան։
Ահաւասիկ որք հեռի առնեն զանձինս իւրեանց 'ի քէն, կորիցեն. սատակեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղեն 'ի քէն։
Ինձ մերձենալ առ ա՟ծ բարի է. և դնել առ տ՟ր զյոյս իմ։
Պատմել զա՟մ օրհնութիւնս քո, 'ի դրունս դստեր սիոնի։

Իմաստութիւն Ասափայ։

Սաղմոս. ՀԳ։

Ասափ [illegible] վիճէ ընդ ա՟յ վ՟ն քանդեցմանն եղելոյ, և վ՟ն տառապանացն ժողովրդեան որք եղեն 'ի թշնամեաց քրիստոնէայց։

Ընդէ՞ր մերժեցեր ա՟ծ իսպառ. բարկացաւ սրտմտութիւն քո 'ի վ՟ր խաշին արօտի քո։
Յիշեա՛ զժողովուրդ քո, զոր ստացար 'ի սկզբանէ. փրկեցեր զգաւազան ժառանգութեան քո։
Լեառն սիոն այս՝ ուր բնակեցար դու.

քու 'ի սմա․ համբարձ զձեռն քո 'ի
վր̄ ամբարտաւանութե̄ն նց̄ իսպառ։
Որ ինչ անիրաւեցաւ թշնամին 'ի
սրբութեան քում․ պարծեցան ատելիք
քո 'ի մէջ բարեկենդանութեան իւրեանց․
Եդին զնշանս իւրեանց 'ի նշանս․
և ինքեանք ոչ ծանեան զելս 'ի վե֊
րուստ։
Ոպ̄ յանտառի, փայտատօք կոտորե֊
ցին զդրունս նր̄․ 'ի միասին փայտա֊
տօք և մրճօք կործանեցին զնա։
Այրեցին 'ի հուր զսրբութի̄ քո յերկ֊
րի․ պղծեցին զխորան անուան քո։
Ասացին 'ի սիրտս իւրեանց ազգք
նց̄ 'ի միասին․ եկայք լռեցուսցուք
զա̄մ տօնս ա̄յ յերկրէ։
Նշանս մեք ինչ ոչ տեսաք․ և ոչ
ևս գուցէ մարգարէ․ և զմեզ ինչ
որ ոչ ճանաչիցէ։
Մինչև յե՞րբ ա̄ծ նախատէ թշնա֊
մին, բարկացուցանէ հակառա֊
կորդն զանուն ա̄ք քո։
Ընդէ՞ր դարձուցանես զձեռն քո․
և զաջ քո 'ի միջոյ ծոցոյ քումմէ
իսպառ։
Ա̄ծ թագաւոր մեր յառաջ քան

զյաւիտենանս․ որ արարեր զփրկու
թին ՚ի մէջ երկրի։
Դու հաստատեցեր զօրութ̃ քով
զծով․ դու խորտակեցեր զգլուխ
վիշապին ՚ի վր̃ ջուրց։
Դու փշրեցեր զգլուխ վիշապին, և
ետուր զնա կերակուր զօրայն հնդ_
կաց։
Դու բղխեցուցեր զաղբիւրս և ըղ
վտակս․ դու ցամաքեցուցեր զգետս
սաստիկս։
Քո է տիւ, և քո է գիշեր․ զլոյս և
զարև դու արարեր․ և դու հաստա
տեցեր զամ̃ սահմանս երկրի․ զգա
րուն և զամառն դու ստեղծեր։
Այս յուշ լիցի քեզ՝ զի թշնամին
նախատեաց զՏր̃դ․ ժողովուրդ ան_
զգամ բարկացոյց զանուն ս̃բ քո։
Մի՛ մատներ գազանաց զանձն որ
խոստովան առնի առ քեզ․ և զան_
ձինս տնանկաց քոց մի՛ մոռանար
իսպառ։
Հայեա՛ց յուխտ քո․ զի լցան տունք
ամփշելոց յերկրի անիրաւութ̃։
Մի՛ դարձցի տնանկն ամաչեցեալ․
այլ աղքատն և տնանկն օրհնես_
ցեն

ցեն զանուն տր. քո։
Արի՛ ած, և դատեա՛ զդատաս_
տանս քո. յիշեա՛ զնախատինս՝ որ
յանզգամէն զօրհանապազ։
Մի՛ մոռանար զձայն պաշտօնէից
քոց. ամբարտաւանութի՛ ատե_
լեաց քոց վերասցի հանապազ։

Ի կատարած մի՛ ապականեր. Սաղմոս օրհ_
նութե Ասափայ. ՀԴ։

Ասափ խօսէ 'ի բերանոյ ձն յաւուր դատա_
ստութե՛ մեղաւորաց, և արդարոց հատուց_
մանէ բարեաց և չարաց։

Խոստովան եղիցուք առ քեզ
ած, խոստովան եղիցուք և
կարդասցուք զանուն տր. քո։
Պատմեցից զամ սքանչելիս քո.
յորժամ ժամ առից՝ ես ուղիղ դա
տեցայց։
Մաշեցաւ երկիր՝ և ամ բնակիչք
նր. ես հաստատեցի զսիւնս նր։
Ասացի անօրինաց, թէ մի՛ անօրի_
նիք. և մեղաւորաց, թէ մի՛ բարձ
րացուցանէք զեղջիւրս ձեր։
Մի՛ համբառնայք 'ի բարձունս

զեղջիւրս ձեր . և մի՛ խօսիք զա̃յ
անիրաւութի.

Զի ոչ յարևելից՝ և ոչ յարև-
մտից, և ոչ յանապատէ լերանց,
այլ ա̃ծ դատաւոր է.

Զայս խոնարհ առնէ, և զայն
բարձրացուցանէ. բաժակ ՚ի ձե-
ռին տ̃ն, գինի լի անապակ արկե̃լ.
և խոնարհեցոյց յայսմանէ յայս.
Սակայն մրուր նր̃ ոչ սպառեսցի. և
արբցեն զնա ա̃մ մեղաւորք երկրի.
Եւ ես ցնծացայց յաւիտեան. սաղ-
մոս ասացից ա̃յ յակոբայ.

Զա̃մ եղջիւրս մեղաւորաց փշրես-
ցես. և բարձր եղիցի եղջիւր ար-
դարոյ.

Ի չափաբած ընդ օրհնութեամբ. Սաղմոս
յասափայ. և երգ առ ասորեստա-
նեայսն. Հ̃Ե.

Աստ խօսի զյաղթութենէ հրէից ընդդէմ
ասորւոց և զյաղթութենէն ք̃ի, որով
եմուտ յեկեղեցի իւր ա̃ծ:

Յայտնի է ՚ի հրէաստանի ա̃ծ, և
յիսրայէլ մեծ է անուն նր̃.
Եղև ՚ի խաղաղութեան տեղի նր̃.
և

եւ բնակութ՟ն նր՟ 'ի սիօն ։

Ընդ խորտակեաց տր՟ զզօրութ՟ն աղեղան · զղէն · զսուր · եւ զճա_կատամարտ ։

Լուսատու ես դու սքանչելապէս լերանցն յաւիտենից · խռովեսցին ամենեքեան որք անմիտք են սր_տիւք · ննջեցին զքունս իւրեանց՝ եւ ինչ ոչ գտին ։

Ամ՟ արք՝ 'ի մեծութե՟ ձեռաց իւր_եանց · 'ի սաստէ քումմէ ա՟ծ յակո_բայ ննջեցին,որք հեծեալ էին 'ի ձիս ։

Դու ահաւոր ես՝ եւ ո՞վ կարէ կալ_ առաջի քո · ո՞ւր երեւեցար դու յերկնից · յայտնի եղեւ բարկութ՟ն քո ։

Երկիր երկեաւ եւ սաստեաց՝ ընդ յառնելն ա՟յ 'ի դատաստան · ընդ ապրեցուցանել զամ՟ հեզս երկրի ։

Խորհուրդք մարդկան խոստովան առնիցին առ քեզ · եւ ծածկեալք ի_մաստութ՟ք օրհնեսցեն զքեզ ։

Ուխտս դիք եւ կատարեցէք ա՟ն ա՟յ մերոյ · ամենեքեան որք շուրջ էք զնովաւ ։

Մատուցէք պատարագս ահաւո_րին · որ քաղէ զհոգիս իշխանաց ·

ահաւոր է նա քան զա̄մ թագա_
ւորս երկրի։

Ի կատարած վն̄ Իդիթումայ։
Սաղմոս Ասափայ. ՀԶ։

Ահա խրատէ, թէ որպէս ՚ի ժամու նեղութեան
կամէ պարտ էջէ աղօթել. խոկալ, և հառ_
ցանօթուցիւ ղեկաձնութեան, և զփառատանել։

Ձայնիւ իմով ես առ տր̄ կարդա_
ցի. ձայնիւ իմով առ ա̄ծ, և
նայեցաւ առ իս։
Յաւուր նեղութեան իմոյ զա̄ծ խնդ_
րեցի ձեռօք իմովք. և ՚ի գիշերի
առաջի նր̄ ոչ խաբեցայ։
Ոչ կամէր մխիթարել անձն իմ.
յիշեցի զա̄ծ՝ և ուրախ եղէ. հո_
գացի, և նուաղեաց յիս հոգի իմ։
Կանխեցին պահպանութեան աչք իմ. խռո
վեցայ և ոչ խօսեցայ. խորհեցայ
զաւուրսն զառաջինս. և զամսն յա
ւիտենից յիշեցի։
Խօսեցայ ՚ի գիշերի ը̄ սրտի իմում.
հոգայի և տառապէր յիս հոգի իմ։
Մի թէ յաւիտենից մերժ եսցէ զիս
տր̄. և ոչ ևս յաւելցի ՚ի հաճիլ և ևս
կամ ի սպառ արգելցէ զողորմու̄թ
իւր

իւր յլինէն. կամ կատարեսցի զբան
իւր յազգէ մինչև յազգ.
Կամ մոռասցի՞ գթալ ա՛ծ խմև և ս.
կամ արգելցէ՞ զգթութիւն իւր՝ բար
կութ՟ իւրով.
Ասացի՝ այժմ սկսայ. այս է նորո
գումն աջոյն բարձրելոյ.
Յիշեցի զգործս ա՛ն 'ի սկզբանէ.
յիշեցի զսքանչելիս ն՟ր.
Խորհեցայ յա՛մ գործս քո. և 'ի
ձեռագործս քո խորհեցայ.
Ա՛ծ 'ի սրբութե՛ են ճանապարհք քո.
ով է ա՛ծ մե՛ծ՝ ո՛ր զա՛ծ մեր. դու
ես ա՛ծ, որ առնես զսքանչելիս.
Ցուցեր ժողովրդեան քում զզօրութի
քո. փրկեցեր բազկաւ քով զժողովուրդս
քո. զորդիսն յակոբայ՝ և յովսեփու.
Տեսին զքեզ ջուրք ա՛ծ. տեսին զք
քեզ ջուրք և երկեան. և խորք խռո
վեցան 'ի ձայնէ ջուրց բազմաց.
Ձայն ետուն ամպք. քանզի և նետք
քո գնան. ձայն որոտալոյ քոյ անիւ
Երևեցան փայլատակունք քո տիե
զերաց. խռովեցաւ և դողաց երկիր
'Ի ծովս են ճանապարհք քո, և
շաւիղք քո 'ի ջուրս բազումս. և
հետք

հետք քո ոչ երևէին։
Առաջնորդեցեր ոպ խաշինս ժողովր
դեան քո. 'ի ձեռն Մովսէսի և Ա-
հարոնի։

Իմաստութիւն Ասափայ։
Սաղմոս. ՀԷ։
Աստուածպատմէ չարաբերութիւն այս ժո-
ղովրդեան եբրայեցւոց, և զպատ-
րաստութիւն նոցին առ նա։

Նայեցարուք ժողովուրդք
յօրէնս իմ. խոնարհեցու-
ցէք զունկն ձեր 'ի բանս բե
րանոյ իմոյ։
Բացից առակաւ զբերան իմ. և խօ
սեցայց զառակս 'ի սկզբանէ։
Որ լուաք և ծանեաք զայս. և
հարքն մեր պատմեցին մեզ։
Ոչ ինչ ծածկեցաւ յորդւոց նոցա յազգ
յայլ. պատմել զօրհնութիւնս տն, զզօ
րութի և զսքանչելիս իւր զորս արար
Հաստատեաց զվկայութի իւր առ
Յակոբ. և օրէնս եդ 'ի մէջ իսրլի։
Որ ինչ միանգամ պատուիրեաց հարցն
մերոց. ցուցանել զայս որդւոց իւր-
եանց. զի ծանիցէ ազգ այլ։
Որ-

Որդիք որք ծնանին՝ յարիցեն և
պատմեսցեն զայս որդւոց իւրեանց.
զի դիցեն առ ա՟ծ զյոյս իւրեանց.
և մի՛ մոռասցին զգործս ա՟յ։
Զպատուիրանս ն՟ր խնդրելով խնդ-
րեսցեն. և մի՛ եղիցին ո՟պ և հարք
իւրեանց։
Ազգ չար և դառնացող. ազգ որ
ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաս-
տատեաց առ ա՟ծ զհոգի իւր։
Որդիք եփրեմի լիաձիգք՝ և պնդա-
ձիգք, յաւուր պատերազմի կա-
պարճս դարձուցին։
Ոչ կացին նոքա յուխտի ա՟ն. և ը՟ս
իրաւանց ն՟ր ոչ կամեցան գնալ։
Մոռացան զերախտիս ն՟ր. և զսք-
անչելիսն՝ զոր եցոյց ն՟ց։
Առաջի հարց ն՟ց արար զսքանչե-
լիս իւր. յերկրին եգիպտացւոց՝ և
՚ի դաշտին տայանու։
Հերձ զծով՝ և անցոյց զն՟ս. և
կացոյց զջուրսն ո՟պ ՚ի տիկս։
Առաջնորդեաց ն՟ց ամպով ՚ի տուէ.
և զա՟մ գիշեր ՚ի լոյս հրոյ։
Հերձ զվէմն յանապատի, և ես
ըմպել ն՟ց ո՟պ ՚ի խորոց մեծէ։

Հան

Եհան զջուրսն 'ի վիմէն. և հոսեաց
որպ զգետս զջուրսն :
Սակայն յաւելին 'ի մեղանչել. և ևս
բարկացուցին զբարձրեալն՝ յանջրդի
փորձեցին զած 'ի սիրտս իւրեանց.
'ի խնդրել զկերակուր անձանց
իւրեանց :
Տրտնջեցին զայ՝ և ասացին. միթէ
կարօղ իցէ ած պատրաստել սե-
ղան յանապատի :
Քանզի հարկանէր զվէմն և հոսէին
ջուրք. և վտակք խաղային 'ի նմանէ.
Բ'ղէ հա՞ց ևս կարասցէ տալ նա
մեզ. կամ պատրաստեսցէ՞ սե-
ղան ժողովրդեան իւրոյ :
Վ՛կ լուաւ զայս տր, և յապաղեաց.
հուր բորբոքեցաւ 'ի յակոբ. և բար
կութին ել 'ի վր իսրայելի :
Զի ոչ հաւատացին յած. և ոչ
յուսացան 'ի փրկութին նր :
Հրամանեաց ամպոց 'ի վերուստ, և
զդրունս երկնից եբաց. և տեղեաց
'ի նս զմանանայ 'ի կերակուր :
Զհաց երկնից ետ նց, զհաց հրեշ-
տակաց կերան մարդիկք. և էջոյց
'ի նս զկերակուր 'ի լիութին :
Եհան

Աչան զհողմն հարաւոյ. և եհան զօ րութեամբ իւրով զհիւսիսին:
Տեղեաց 'ի նս միս ոպ զհող. ոպ զաւազ ծովու զթռչունս թեւաւորս:
Արկ 'ի մէջ բանակի նց. և շուրջ զխորանօք նց:
Կերին և յագեցան յոյժ. և զցանկութիւն նց ետ նց. և ոչինչ կարօտ եղեն 'ի ցանկութենէ իւրեանց:
Մինչ դեռ՝ կերակուրք 'ի բերանս իւրենց էին, բարկութիւն այ ել 'ի վր նց:
Սպան զբազումս 'ի նոցանէ. և զըն տիր ընտիրս յիէլէ սատակեաց:
Յայսմ ամի մեղան և ևս. և ոչ հաւատացին սքանչելեաց նր:
Պակասեցան յունայնութե աւուրք նց. և ամք նց փութապէս անցին:
Յորժամ սպանանէր զնս, խնդրէին զնա. դառնային և առաւօտ առ նէին առ ած:
Յիշեցին՝ զի ած օգնական էր նց. ած բարձրեալն փրկիչ էր նց:
Սիրեցին զնա բերանօք իւրեանց. և լեզուօք իւրեանց ստեցին նմա. և սիրտ նց ոչ էին ուղիղ ընդ նմա. և ոչ հաւատացին ուխտի նր:

Այլ նա ինքն գթած էր․ քաւէր
զմեղս նց և ոչ ապականէր։
Յաճախէր դարձուցանել զբար-
կութիւն իւր․ և ոչ բորբոքեաց զա
մենայն սրտմտութիւն իւր։
Յիշեաց՝ թէ մարմին են նոքա․ ո-
գի որ ելանէ այլ ոչ դառնայ։
Քանիցս անգամ դառնացուցին
զնա յանապատի․ և բարկացուցին
զբարձրեալն յանջրդի։
Դարձան՝ և փորձեցին զա՛ծ․ և ըզ
սբն իսրայելի զայրացուցին։
Ոչ յիշեցին զձեռն նր․ յաւուր յո-
րում փրկեաց զնս 'ի ձեռաց նեղ-
չաց նց։
Որպէս արար զնշանս և զարուեստս
իւր յերկրին եգիպտացւոց՝ և 'ի
դաշտին տայանու։
Դարձոյց յարիւն զգետս նց․ և
զանձրեւս նց, զի մի արբցեն։
Առաքեաց 'ի նս զշանաճանճ և ե-
կեր զնս․ և գորտիւ ապականեաց զնս
Ետ ժանեկաց զպտուղս նց․ և զվաս
տակս նց մարախոյ։
Եհար կարկտիւ զայգիս նց․ և
զթզենիս նց եղեամբ։

Մատ-

Մատնեաց 'ի կարկուտ զանասուն-
նց · և զստացուածս նց հրով դա-
տեցաւ :

Առաքեաց 'ի նս զսրտմտութի բար-
կութե իւրոյ · զսրտմտութի զբար-
կութի և զնեղութի :

Առաքեաց 'ի նս տանջանս՝ 'ի ձեռն
հրեշտակի չարի · դիմեցոյց 'ի նս
զսրտմտութի բարկութե իւրոյ :

Ոչ խնայեաց 'ի մահուանէ զան-
ձինս նոցա · և զանասունս նոցա 'ի
մահ մատնեաց :

Եհար զամ անդրանիկս եգիպտաց-
ւոց · զսկիզբն ամ վաստակոց նո-
ցա 'ի յարկս քամայ :

Չուեաց եւ որպ խաշինս ժողովր-
դեան իւրոյ · և եհան զնս որպէս
զհօտ յանապատ :

Առաջնորդեաց նց յուսով, և ոչ եր-
կեան, և զթշնամիս նց ծով ծածկեաց :
Եհան զնս 'ի լեառն սրբութե իւրոյ · 'ի
լեառն յայն՝ զոր ստացաւ աջ նր :
Մերժեաց յերեսաց նց զհեթանոսս ·
և վիճակեցոյց 'ի նս զվիճակ ժա-
ռանգութե իւրոյ · և բնակեցոյց 'ի
յարկս նց զազգս իսրայէլի :

Փոր-

Փորձեցին՝ դառնացուցին զած բար
ձրեալն. և զվկայութիւնս նր ոչ պահեցին.
Դարձան խոտորեցան նք և հարքն
իւրեանց. դարձան՝ և եղեն որպէս
աղեղն թիւր։
Դարձեալ բարկացուցին զնա ի
բագինս իւրեանց. և դրօշելովք իւր-
եանց նախանձ արկին նմա։
Լուաւ ած, և արհամարհեաց զնս.
և անարգեաց յոյժ զիէլ։
Մերժեաց յիւրմէ զխորանն ի Սե-
ղովլ. խորանն, զոր բնակեցոյց ի
մէջ մարդկան։
Մատնեաց ի գերութիւն զզօրութիւն նց.
և զգեղ նց ի ձեռս թշնամեաց նց.
Արգել ի սուր զժողովուրդ իւր. և
զժառանգութիւն իւր անտես արար։
Զերիտասարդս նց էկեր հուր. և
զմն կուսանաց նց ոչ ոք սգացաւ։
Քահանայք նց անկան ի սուր. և
զայրիս նց ոչ ոք էր՝ որ լայր։
Զարթեաւ որպէս ի քնոյ տր. որ-
պէս հզօր զի թափէ զգինի։
Եհար յետս զթշնամիս իւր. նա-
խատինս յաւիտենից արար զնս։
Մերժեաց նա զխորանն յովսեփու,

և զազգն եփրեմի նա ոչ ընտրեաց ։
Այլ ընտրեաց նա զազգն յուդայ․
զլեառն սիոն, զոր և սիրեաց ։
Շինեաց ոպ զմիեղջերուի զսրբու-
թին նր․ յերկրի հաստատեաց զնա
յաւիտեան ։
Ընտրեաց զդաւիթ ծառայ իւր, և
ընկալաւ զնա 'ի հօտէ խաշանց․ 'ի
վերջին ծնելոցն ընկալաւ զնա ։
Հովուել զյակոբ ծառայ իւր․ և
զիէլ ժառանգութի իւր ։
Արածէր զնս խմաստութբ սրտի
իւրոյ․ յանմեղութի ձեռաց իւրոց
առաջնորդէր նց ։

Սաղմոս օրհնութեան Ասափայ․ ՀԸ ։

Ասափ խօսի 'ի բերանոյ եկեղեցւոյն ժէ 'ի
ժամանակս Ներոնի, և պղծութանկու_
բէ նորին 'ի յանհաւատից ։

ԱԾ, Եկին հեթանոսք 'ի
ժառանգութի քո․ պղծե
ցին զտաճար սբ քո ։
Արարին զերուսաղէմ
ոպ հիւղս մրգապահաց․ արկին զդ-
դիակունս ծառայից քոց գէշ թռչ-

նոց երկնից. և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։

Հեղին զարիւն նց որպէս զջուր, շուրջ զԵրուսաղեմաւ. և ոչ ոք էր որ թաղէր զնս։

Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց. ծաղր՝ և այպն կատականաց այնոցիկ որք շուրջ էին զմեօք։

Մինչև յե՞րբ տր՝ բարկանաս դու իսպառ. բորբոքեսցի որպէս հուր նախանձ քո։

Հեղ զբարկութիւն քո՛ ի վր ազգաց՝ որք զքեզ ոչ ճանաչեցին. ՛ի վր թգւորաց որք զանուն քո ո՛չ կարդացին. զի կերին զյակոբ. և զտեղինր աւերեցին։

Մի՛ յիշեր զմեղս մեր զառաջինս. վաղվաղեսցէ առ մեզ ողորմութիւն քո տր, զի աղքատացաք յոյժ։

Օգնեա՛ մեզ ած փրկիչ մեր. վս փառաց անուա՛ն քոյ։

Տր փրկեա՛ զմեզ՝ և քաւեա՛ զմեղս մեր վս անուա՛ն քոյ։

Մի՛ երբեք ասասցեն ՛ի հեթանոսս թէ ուր է ած նց։

Եւ յայտնի լիցի ՛ի վր հեթանոսաց, առաջի աչաց մերոց.

առ

առ՚ի խնդրել զվրէժ արեան ծա_ռայից քոց՝ որ հեղաւ :

Մտցէ առաջի քո հեծութիւն կա_պելոց · ըստ մեծութեան բազկի քո, շահեա՛ դու զորդիս սպանելոց :

Հատո՛ դրացեաց մերոց եօթնպա_տիկ ՚ի ծոցս նց, նախատինս նոր_եանց զոր նախատեցին զքեզ տր :

Մեք ժողովուրդք և խաշն արօտի քո · խոստովան եղիցուք առ քեզ յաւիտեան · յազգէ յազգ պատ_մեսցուք զօրհնութիւն քո :

Ի կատարած ՚ի վր̄ այլայլելոց՝ վկայու_թե Ասափայ · Սաղմոս ՚ի վերայ Ասորեստանեայց · ՀԹ :

Հովիւ Իսրայէլի նայեա՛, որ առաջնորդես իբ_րեւ զխաշն զՅովսէփ :

Որ հովուես իսրլի նայեաց · որ ա_ռաջնորդես ոչ խաշին յովսեփու :

Որ նստիս ՚ի քերովբէս՝ յայտնեայ առաջի եփրեմի, բենիամինի և մա_նասէի :

Զարթո՛ զզօրութիւն քո · և եկ ՚ի կեցուցանել զմեզ :

Ած զօրութեց, դարձո՛ զմեզ, երևե_

ցո՛ զերեսս քո 'ի մեզ՝ և կեցցուք։
Տ͞ր ա͞ծ զօրութեանց՝ մինչև յե՞րբ բար
կանաս յաղօթս ծառայից քոց։
Ջամբեցեր մեզ զհաց արտասուաց.
և արբուցեր մեզ զարտասուս չափով։
Արարեր զմեզ նախատինս դրա_
ցեաց մերոց. այպն կատականաց
թշնամեաց մերոց։
Տ͞ր զօրութե͞նց, դարձո՛ զմեզ՝ երևեցո՛
զերեսս քո 'ի մեզ՝ և կեցցուք։
Զայգի յեգիպտոսէ փոխեցեր. հա
ներ զհեթանոսս՝ և զնա տնկեցեր,
և առաջնորդեցեր նմա։
Հաստատեցեր զարմատս նո՛ր, և ելից
զերկիր. ծածկեաց զլերինս հովանի
նո՛ր. և բարունակ նո՛ր զմայրսն ա͞յ։
Ձգեաց զորթ իւր մինչև 'ի ծով.
մինչև 'ի գետս են շառաւիղք նո՛ր։
Ընդէ՞ր քակեցեր զցանկ նորա. և
կթեն զնա անցաւորք ճանապարհի
Ապականեաց զնա խոզ անտառի.
և էրէ վայրի արածեցաւ 'ի նմ͞։
Տ͞ր զօրութեանց՝ դարձ՛ հայեա՛ց յերկ
նից՝ և տե՛ս. ա՛յց արա այգւոյս այս_
միկ. և դարմա՛ն տա՛ր սմա, զոր
տնկեաց աջ քո։

Դ

Դի՛մն որդւոյ մարդոյ՝ զոր զօրացու-
ցեր զնա ՚ի քեզ. այրեցեալ ՚ի հուր՝ և
աւերեալ, ՚ի սաստէ քումմէ կորիցեն։
Եղիցի ձեռն քո ՚ի վ՟ր առն. աջ քո
՚ի վերայ որդւոյ մարդոյ՝ զոր զօրա-
ցուցեր զնա ՚ի քեզ։
Մի՛ ևս ՚ի բացեայ եղիցուք մեք ՚ի
քէն կեցուսցես դու զմեզ. և զա-
նուն քո մ̃ր կարդասցուք։
Տ̃ծ զօրուե̃ց, դարձո՛ զմեզ. երևե-
ցո՛ զերեսս քո ՚ի մեզ՝ և կեցցուք։

Ի կատարած վս̃ հնձանացն։

## Սաղմոս Ասափայ. Ձ։

ԱՀԱ ՅՈՐԴՈՐԷ ԶԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԵԱՄԲ
ՏՕՆԵԼ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՎԱՍՆ ՆՈՐԱԼՈՒՍՆՈՒԹԵ̃
ԵՕԹՆԵՐՈՐԴԻ ԱՄՍԵԱՆ։

Ցնծացէք առ Ա̃ծ, օգնական է մեր.
աղաղակեցէք առ Ա̃ծ յակոբայ։
Առէք սաղմոս, և տուք զօրհնու-
թի̃. սաղմոս ասասցէք նմա ՚ի ձայն
քաղցրութե̃։
Փո՛ղ հարէք ՚ի գլուխ ամսոյ. յա-
ւուր նշնաւորի տարեկանաց մերոց։
Հրաման է այս Իսրայէլի. և իրա-

րաւունք են այ յակոբայ։

Վկայուի յովսեփու զոր եդ ի նմա. ուր ելանէր նա յերկրէն եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ։

Ի բաց արար ՚ի բեռանց զթիկունս նր. և զձեռս նր յոլծ և ՚ի թի ծառայելոյ։

Ի նեղութեան կարդայեր առ իս՝ և փրկեցի զքեզ. լուայ քեզ ՚ի գաղտնութեան մրրկին. և փորձեցի զքեզ ՚ի վր ջուրցն հակառակութեան։

Լուր ժողովուրդ իմ՝ և վկայեմ քեզ. և իսրայէլ, թէ լուիցես ինձ։

Մի և եղիցին քեզ ածք առժամանեայք. և մի երկիր պագանիցես դու այ օտարի։

Ես եմ տր ած քո՝ որ հանի զքեզ յերկրէն եգիպտացւոց. բաց զբերան քո՝ և լցից զգա։

Ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում, և իէլ յիս լինէր ոչ նայեցաւ։

Արձի թողի զնս երթալ զհետ կամաց սրտից իւրեանց. զի գնասցեն նք ըստ կամս անձանց իւրեանց։

Օ թէ ժողովրդեան իմոյ լուեալ էր ինձ. կամ իսրայէլի զճանա-

պարհս

պարհս իմ՝ գնացեալ էր ·
Առ ոչինչ խոնարհ արարեալ էր իմ
զթշնամիս նց · և 'ի վր նեղչաց նց
արկեալ էր իմ՝ զձեռն իմ:
Թշնամիք տն ստեցին նմա · և եղի
ցին ժամանակք նց յաշխարհի ·
Կերակրեաց զնս 'ի պարարտութենէ ցո
րենոյ · և 'ի վիմէ մեղր յագեցոյց զնս:

Սաղմոս Ասափայ · ՁԱ ·
Աստ յանդիմանէ զիշխանս, և զդատա-
ւորս անիրաւս:

Ածեկաց 'ի ժողովս աստուածոց ·
և 'ի միջի նց դատէր զնս ·
Մինչև յերբ դատէք անիրաւութի,
և անձն առնուք մեղաւորաց ·
Դատ արարէք որբոյն և այրւոյ ·
խոնարհին արարէք տնանկին և խո
նարհի ·
Փրկեցուցէք զաղքատն և զտնանկն ·
'ի ձեռաց մեղաւորի փրկեցէք զնս ·
Ոչ իմացան, և ոչ 'ի միտ առին · 'ի
խաւարի գնացին, և շարժեսցին ամ՝
հիմունք երկրի ·
Ես ասացի թէ ածք իցէք · կամ
որդիք բարձրելոյն ամենեքեան ·

Գուք ահաւադին որ զմարդին մե-ռանին. եւ որ զնոյն յիշխանաց անկանին։
Ա՛րի տծ, եւ դատեա՛ զերկիր. զի դու ժառանգեսցես զամ՛ հեթանոսս։

Սաղմոս օրհնութե Ասափայ. ՁԲ։

Ասա մաղթե զած ընդդէմ թշնամեաց որք պատերազմեն զեկեղեցին առ 'ի քակել զնա, եւ հայցէ 'ի նմանէ զօգնութե։

Ա Ո՞ քեզ նմանիցի. մի՛ լռեր եւ մի՛ դադարեր, ած։
Զի ահա թշնամիք քո գոչեցին. եւ ատելիք քո համբար-ձին զգլուխ իւրեանց։
'Ի վ՛ր ժողովրդեան քո խորամանկեցին զգիտութի. խորհեցան 'ի վ՛ր սրբոց քոց, եւ ասացին։
Եկայք սատակեսցուք զնո՛ յազ-գաց. եւ մի՛ յիշեսցի անուն իսրլի եւ եւս։
Խորհեցան միաբանութե՛ 'ի միա-սին. եւ վ՛ քո ուխտ արարին։
Բնակք եդովմայեցւոց՝ եւ իսմայե-լացիք. մովաբ, եւ հագարացիք։
Գեբաղ՝ ամոն՝ ամաղեկ. եւ այլա-զգիքն ամենայն բնակչօքն հան-դերձ

դերձ ծուխոյ ։
Նաև Ասուր եկեալ էր ընդ նոսա ։
ամենեքեան սոքա օգնակիցք էին
որդւոցն Ղովտայ ։
Արա՛ զնոսա որպէս զՄադիամ ։ որպէս
զՍիսարայ՝ և որպէս զՅաբին՝ ՚ի ծոր_
ծորան Կիսոնի ։
Սատակեցան նոքա յԱկամս դոլ_
րայ ։ և եղեն որպէս զաղբ երկրի ։
Արա՛ զիշխանս նոցա որպէս զՕրեբն ,
զԶեբն , զԶեբեէ , զՍաղմանա ։ և
զամենայն իշխանս նոցա ։
Ոյք ասացին ժառանգեսցուք ՚ի
մեզ զսրբութիւն Աստուծոյ ։
Աստուած իմ, արա՛ զնոսա որպէս զանիւ ։ և որպէս
զեղէգն առաջի հողմոյ ։
Որպէս հուր , զի այրէ զանտառս ։
և որպէս բոց , զի կիզու զլերինս ։
Այնպէս հալածեսցես զնոսա մրրկաւ
քով ։ և բարկութեամբ քով խռովեսցուս_
ցես զնոսա ։
Լի՛ց զերեսս նոցա անարգանօք ։ և
խնդրեսցեն զանուն քո Տէր ։
Ամաչեսցեն և խռովեսցին յաւի_
տեանս յաւիտենից ։ և ամօթալից
կորիցեն ։

Ծա_

Ծանիցեն զի անուն քո Տր է. և դու միայն բարձրեալ ես 'ի վր ամ երկրի։

'Ի ժամանակէ վն հնձանաց Սաղմոս որդ-ւոցն Կորխայ. ՁԳ։

Աղօթք խօսի սփոփարանէ արդարոց առ Ք տեսանել զերկնային հայրենիսն և զվերին երուսաղէմ։

Որպէս սիրելի են յարկք քո՝ Տր զօրութեանց. ցանկայ և փափագի անձն իմ 'ի գաւիթս քո։

Սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ Ած կենդանի։

Զի ճնճղուկ եգիտ իւր տուն. և տատրակ բոյն, ուր դիցէ զձագս իւր։

Սեղանք քո Տր զօրութեանց, Թագաւոր իմ և Ած իմ։

Երանի ամենեցուն՝ որք բնակեն 'ի տան Տն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ։

Երանեալ է այր՝ որոյ օգնութիւն 'ի քէն է. ելս եդ 'ի միտս իւրում, 'ի հովտէս արտասուաց, 'ի տեղւոջ յորում ուխտեաց։

Օրհնութիւն տացէ որ զօրէնս դնէ. գնաս-

գնասցէ նա 'ի զօրութէ 'ի զօրութի. և
երևեսցի ա̄ծ հրեշտակաց 'ի սիոնէ:
Տ̄ր ա̄ծ զօրութեց՝ լուր աղօթից ի-
մոց. ունկն դիր ա̄ծ յակոբայ:
Ընդունող ես դու մեր՝ տես ա̄ծ, և
նայեաց յերեսս օծելոյ քոյ:
Զի՝ լաւ է ինձ՝ մի օր 'ի գաւիթս
քո, քան զհազարս:
Ընտրեցի ես ընդ աղբ կալ 'ի տան
ա̄յ. առաւել քան զբնականալ 'ի
յարկս մեղաւորաց:
Ողորմութի և զճշմարտութի սիրէ տ̄ր
ա̄ծ մեր. զշնորհս և զփառս տացէ:
Տ̄ր ոչ պակաս առնէ զողորմութի իւր
յայնցանէ՝ որք գնան յանբծութե:
Տ̄ր ա̄ծ զօրութեց. երանելէ այր՝
որ յուսայ 'ի քեզ:

Ի կատարած որդւոցն կորխայ:

Սաղմոս. ՁԴ:

Ակայ գուշակէ զներհամարձակութիւն բանին ա̄յ, և աղաչէ զհայր հաշտեցուցանել զնոյն:

Հաճեցար տ̄ր զերկիր քո. և դար-
ձուցեր զգերութի յակոբայ:
Թողեր զանօրէնութի ժողովրդեան
քոյ. և ծածկեցեր զա̄մ մեղս ն̄ց:

Դա-

Լռեցուցեր զա՟մ սրտմտութիւնս քո. և դարձար ՚ի բարկութենէ սրտմտութե՟ քոյ։

Դարձ առ մեզ ա՟ծ փրկիչ մեր. և դարձո՛ զսրտմտութիւնս քո ՚ի մէնջ։

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ տ՟ր. և մի՛ ձգեր զբարկութիւն քո յազգէ մինչև յազգ։

Ա՟ծ դու դարձեալ կեցուսցես զմեզ. և ժողովուրդ քո ուրախ եղիցի ՚ի քեզ։

Ցո՛յց մեզ տ՟ր զողորմութիւն քո. և զփրկութիւն քո տո՛ւր մեզ։

Լուայց զի՞նչ խօսի տ՟ր ա՟ծ մեր. խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան իւրոյ. առ սուրբս իւր՝ և առ այնոսիկ, որք դարձեալ են առ նա սրտիւք։

Սակայն մերձ է առ երկիւղածս իւր փրկութիւն նորա. բնակել փառաց նորա յերկրի մերում։

Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին. արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին։

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ. արդարութիւն յերկնից երևեցաւ։

Տ՟Ր տացէ զքաղցրութիւն. և երկիր մեր տացէ զպտուղ իւր. արդարութիւն

առա-

առաջի նր գնասցէ. դիցէ 'ի ճա_
նապարհի զգնացս իւր։

Աղօթք Դաւթի. 'Ի չարչարած որդ_
ւոյն չորեքայ։

## Սաղմոս. ՁԵ։

Աղօթ աղօթէ 'ի Եբրայեցւոյ աէ 'ի ժամու չար_
չարանաց նորին. նաև ինքն աղօթէ զն
ինքեան 'ի վշտակցութեն։



Խոնարհեցո՛ տր զունկն քո, և
լո՛ւր ինձ. զի աղքատ և տը
նանկ եմ ես։
Պահեա՛ զանձն իմ, զի սուրբ եմ. փր_
կեա՛ զծառայս քո, ած իմ՝ որ 'ի
քեզ յուսացայ։
Ողորմեա՛ց ինձ տր, զի առ քեզ ա_
ղաղակեցի զօրհանապազ. ուրախ
արա զանձն ծառայի քո. զի առ
քեզ տր համբարձի զանձն իմ։
Զի դու տր քաղցր և ուղիղ ես.
բազումողորմ առ ամենեսեան, որք
կարդան առ քեզ։
Ունկն դիր տր աղօթից իմոց. և նայ
եա՛ց 'ի ձայն խնդրուածաց իմոց։
Յաւուր նեղութե իմոյ կարդացի

առ

առ քեզ՝ և լուա՛ր ինձ։
Ոչ ոք է նման քեզ յա̃ծս տ̃ր. և
ոչ ոք է ըստ գործս քո։
Ա̃մ ազգս զոր արարեր՝ եկես-
ցեն՝ և երկիրպագցեն առաջի քո,
և փառաւոր արասցեն զանուն քո
յաւիտեան։
Մեծ ես դու տ̃ր և առնես զսքան-
չելիս. և դու միայն ես ա̃ծ։
Առաջնորդեա՛ ինձ ՚ի ճանապարհի
քում. և գնացից ՚ի ճշմարտութե̃
քում. և ուրախ եղիցի սիրտ իմ՝
երկնչել յանուանէ քումմէ։
Խոստովան եղէց առ քեզ տ̃ր ա̃ծ
իմ բոլորով սրտիւ իմով. փառաւոր
արարից զանուն քո յաւիտեան։
Մեծ եղև ՚ի վ̃ր իմ ողորմութիւն
քո. և փրկեցեր զանձն իմ ՚ի դժո-
խոց ներքնոց։
Ա̃ծ, անօրէնք յարեան ՚ի վ̃ր իմ.
և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն
իմ. և ոչ համարեցան զքեզ ա̃ծ
առաջի իւրեանց։
Այլ դու տ̃ր ա̃ծ իմ՛, գթած ես և
ողորմած, երկայնամիտ՝ բազում-
ողորմ՝ և ճշմարիտ. նայեաց առ-
իս

իս և ողորմեա՛ց ինձ ։
Տո՛ւր զզօրութիւն ծառայի քո . կե-
ցո՛ զորդի աղախնոյ քո . և արա՛ առ
իս նշան բարութեան ։
Տեսցեն ատեցիք իմ և ամաչեսցեն .
զի դու տր օգնեցեր ինձ , և մխի-
թարեցեր զիս ։

Որդւոցն Կորխայ Սաղմոս օրհնութեան .
ՁԶ ։
Վասն նախագուշակէ զշինութիւն եկեղեց-
ւոյն քի , և զներբնակութիւն բանին այ ։

Հիմունք նր ՚ի լերանն որ նր . սի-
րէ տր զդրունս սիօնի առաւել
քան զա՛մ՝ յարկսն յակոբայ ։
Փառաւորեալն խօսեցաւ վն քո . ա-
հաւասիկ քաղաքդ այ ։
Յիշեցի զռահաբ և զբաբիլոն՝ որք
ճանաչեն զիս . ահա այլազգիք , և
ծուր՝ և ժողովուրդք հնդկաց՝ սո-
քա եղեն անդ ։
Մայր սիօնի ասէ մարդ . և մարդ
ծնաւ ՚ի նմա , և ինքն հիմունս ե-
արկ նմա բարձրեալն ։
Տր պատմեսցէ գրովք ժողովրդեան՝,
իշխանացս այսոցիկ՝ որք եղեն անդ ։

Ո̃պ զի ուրախ լիցին ՚ի քեզ ամենե- քեան. որոց բնակութ̃ի ՚ի քեզ է,

Օրհնութիւն սաղմոսի որդւոցն Կորխայ. ՚Ի կատարած վ̃ս մահելէլեթայ. ըն եւ պատասխանի. իմաստութիւն Եմմանայ Եզրայելացւոյ։

## Սաղմոս. ՁԷ։

Աղօթ խօսի ք̃ս ՚ի ժամու խաչելութեն, և զերարչարանչելոյ ամբարշտաց ՚ի ժա- մանակս Հրապարակութեն։

Տ̃Ր ա̃ծ փրկութե իմոյ. ՚ի տուէ կար դացի, և գիշերի առաջի քո։
Մտցեն աղօթք իմ առաջի քո. ա̃ր խոնարհեցի ունկն քո ՚ի խնդր- ուածս իմ։
Զի լցաւ չարչարանօք անձն իմ. և կեանք իմ ՚ի դժոխս մերձեցան. և համարեցայ ես ընդ այնոսիկ, որք իջանեն ՚ի գուբ։
Եղէ ես ո̃պ մարդ առանց օգնա- կանի. և ՚ի մեռեալս ազատ։
Որպէս վիրաւորս, որք ննջեն ՚ի գե րեզմանի։
Զորս դու ոչ յիշեցեր, նոքա ՚ի

ձեռանն քումմէ մերժեցայ։
Եդին զիս 'ի գբի ներքնումն 'ի խա
ւարի և 'ի ստուերս մահու։
Յիս հաստատեցաւ սրտմտութիւն քո․
զամենայն զբօսանս քո ածեր 'ի վերայ իմ։
Հեռի արարեր յինէն զծանօթս
իմ․ և եդին զիս նշաւակ իւրեանց։
Մատնեցայ՝ և ոչ ելանէի․ աչք իմ
տկարացան յաղքատութենէ։
Աղաղակեցի առ տէր զօր հանապազ․
և համբարձի առ քեզ զձեռս իմ։
Մի թէ մեռելոց առնիցես զսքանչե
լիս քո․ կամ բժիշկք յարուցանիցեն,
և խոստովան առնիցին առ քեզ։
Մի թէ պատմեսցէ ոք երբէք 'ի գե
րեզմանի զողորմութիւն քո․ կամ
զճշմարտութիւն քո 'ի կորստեան։
Մի թէ ծանիցին 'ի խաւարի ըս
քանչելիք քո․ կամ արդարութիւն
քո յերկիր մոռացեալ։
Ես առ քեզ տէր աղաղակեցի․ առա
ւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ
քեզ։
Ընդէ՞ր տէր՝ մերժես զանձն իմ․ կամ
դարձուցանես զերեսս քո յինէն։
Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի

մանկութենէ իմմէ ․ 'ի բարձրութենէ
խոնարհեցայ և ափշեցայ ։
Յիս հաստատեցաւ բարկութիւն քո ․
արհաւիրք քո խռովեցուցին զիս ։
Շրջեցան զինև որպէս ջուր ․ զօր ամ
պաշարեցին զիս 'ի միասին ։
Հեռի արարեր յինէն զբարեկամս
իմ, և զծանօթս իմ, մի թշուա-
ռութենէ իմոյ ։

Իմաստութիւն Էթմանայ Եզրայելացւոյ ։

## Սաղմոս ․ ՁԸ ։

Վասն յիշէ զողորմութեան և զճշմարտութեան
այ ․ զորս և առաքէ կալ յաւիտե-
նական ըստ խոստման այ ։

Զողորմութիւնս քո տր յաւի-
տեան օրհնեցից ․ յազգէ
յազգ պատմեցից զճշ-
մարտութիւն քո բերանով իմով ։
Ասացեր' թէ աշխարհ ողորմութեամբ
շինեսցի ․ յերկինս պատրաստ եղի-
ցի ճշմարտութիւն քո ։
Եդի ուխտ ընտրելոց իմոց ․ երդ-
ուայ դաւթի ծառայի իմոյ ։
Յաւիտենին հաստատեցից զզաւակ քո

և

և շինեցից յազգէ յազգ զաթոռ քո։
Խոստովան եղիցին երկինք սքան֊
չելեաց քոց տր. և ճշմարտութի քո
յեկեղեցիս սրբոց։
Ո՞վ է յամպս որ հաւասարի քեզ.
կամ ո՞վ նմանիցի տն յորդիս այ։
Ած փառաւորեալ է 'ի խորհուրդս
սրբց իւրոց. մեծ և ահաւոր 'ի վր
այնոցիկ որք շուրջ են զնովաւ։
Տր ած զօրութենց, ո՞ նման է քեզ.
հզօր ես դու տր՝ և ճշմարտութի
քո շուրջ է զքև։
Դու տիրես զօրութենց ծովու. զխռո֊
վութի ալեաց նր դու ցածուցանես։
Դու խոնարհեցուցանես ոպ վիրա֊
ւորս զամբարտաւանս. 'ի զօրութի
բազկի քո ցրուեցեր զթշնամիս քո։
Քո են երկինք՝ և քո է երկիր. զաշխ
լրիւ իւրով դու հաստատեցեր. զ
հիւսիս և զհարաւ դու արարեր. Թա
բոր և Հերմոն յանուն քո ցնծասցեն
Քո է բազուկ՝ և քո է զօրութի. զօրա
ցի աջ քո և բարձր եղիցի ձեռն քո
Արդարութի և իրաւունս հաստա
տէ է աթոռ քո. ողորմութի և ճշմար
տութի գնասցեն առջի երեսաց քոց։

Երանի ժողովրդեան, որք գիտեն
զօրհնութի՛ քո տէր ․ 'ի լոյս երեսաց
քոց գնասցեն ․ և յանուն քո ցըն_
ծասցեն զօրհանապազ ․ և յարդա
րութե՛ քում բարձր եղիցին ։
Պարծանք զօրութե՛նց մերոց դու
ես տէր ․ և 'ի կամս քո բարձր ե_
ղիցի եղջիւր մեր ։
Ի տ՟նէ է օգնութի ս՟րբյն իսրայէլի՝
թագաւորին մերոյ ․
Յայնժամ խօսեցար տեսլեամբ ը՟ն
որդիս քո, և ասացեր․ եդի զօգնութի
իմ 'ի վ՟ր հզօրին ․ և բարձր արարի
զընտրեալն 'ի ժողովրդենէ իմմէ ։
Գտի զդաւիթ ծառայ իմ ․ իւղով
սրբով իմով օծի զնա ։
Ձեռն իմ ընկալցի զնա ․ և բազուկ
իմ զօրացուսցէ զնա ։
Ո՛չ մեղիցէ նմա թշնամի ․ և որդի
անօրէնութե՛ ո՛չ չարչարեսցէ զնա ։
Հարից առ՟ջի նր՟ զթշնամիս նր՟․ և զա
տելիս նր՟ 'ի պարտութի մատնեցից ։
Ճշմարտութի իմ, և ողորմութի
իմ ընդ նմա ․ և յանուն իմ բարձր
եղիցի եղջիւր նր՟ ։
Եդից 'ի ծովս զձեռն նր՟ ․ և 'ի վ՟ր
գե_

գեստոյ զաջ նորա։
Նա կարդասցէ առ իս՝ Հայր իմ ես
դու, Աստուած ընդունող փրկութեան իմոյ։
Նա անդրանիկ արարից զնա. և
բարձր քան զթագաւորս երկրի։
Յաւիտեան պահեցից նմա զողոր–
մութիւն իմ. և ուխտ իմ հաւա–
տարիմ ընդ նմա։
Հաստատեցից յաւիտեանս յաւի–
տենից զզաւակ նորա. և զաթոռ նորա
որպէս զաւուրս երկնից.
Թէ թողցեն որդիքն նորա զօրէնս իմ,
և յիրաւունս իմ ոչ կամեսցին գնալ։
Թէ զարդարութիւնս իմ անարգեսցեն.
և զպատուիրանս իմ ոչ պահեսցեն,
Հարից գաւազանաւ զանօրէնութիւնս
նոցա. և տանջանօք զանիրաւութիւնս նոցա։
Բայց զողորմութիւն իմ ոչ արգելից ՚ի
նոցանէ. և ոչ նենգեցից ճշմարտու–
թեան իմում. և ոչ անարգեցից զուխտ
իմ. և ինչ որ ելանէ ընդ շրթունս
իմ, զայն ոչ արհամարհեցից։
Մի անգամ երդուայ ՚ի սրբութիւն
իմ, թէ Դաւթի ես ոչ ստեցից։
Զաւակ նորա յաւիտեան կացցէ. և ա–
թոռ նորա որպէս զարեգակն առաջի իմ. և

ոպ զլուսին, զի հաստատեսցէ յաւի
տեան վկայ հաւատարիմ յերկինս
Խոկարդ՝ դու մերժեցեր և անարգե
ցեր. և ընդ վայր հարեր զօծեն քո։
Դարձուցեր զուխտ 'ի ծառայէ
քումմէ. պղծեցեր յերկրի զսրբու
թի նր։
Քակեցեր զամ պարիսպս նր. և
եդեր զամուրս նր 'ի դողումն։
Յափշտակեցին զնա անցաւորք ճա
նապարհի. եղև նա նախատ դրա
ցեաց իւրոց։
Բարձր արարեր զաջ նեղչաց նր.
ուրախ արարեր զամ թշնամիս նր։
Դարձուցեր զօգնութի 'ի սրոյ նր. և
ոչ ընկալար զնա 'ի պատերազմի։
Նուազեցներ զսրբութի նր. և զա-
թոռ նր յերկիր կործանեցեր։
Նուազ արարեր զաւուրս ժամանա
կաց նր. և հեղեր զնովաւ զամօթ։
Մինչև յերբ դարձուցանես զե-
րեսս քո իսպառ. բորբոքեսցի ոպ
հուր բարկութի քո։
Խոկարդ յիշեա և տես՝ ո՞վ է իմ
հանգիստ. մի թէ 'ի զո՞ւր ինչ ըս-
տեղծեր զամ որդիս մարդկան։

Ո՞վ

Ո՞վ է մարդ՝ որ կեցցէ՝ և ոչ տեսցէ
զմահ, կամ՝ փրկեսցէ զանձն իւր
'ի ձեռաց դժոխոց։
Ո՞ւր են ողորմութիւնք քո առաջինք
տր. զոր երդուար դաւթի ճշմար_
տութեամբ քով։
Յիշեա՛ զնախատինս ծառայի քոյ.
զոր ընկալայ 'ի ծոց իմ յազգաց
բազմաց։
Զոր նախատեցին թշնամիք քո տր.
նախատեցին փոխանակ օծելոյ քոյ։
Օրհնեալ տր ած յաւիտեանս յա
ւիտենից՝ եղիցի եղիցի։

Օրհնութիւն Եսայեայ որդւոյն
Ամովսայ: Եսայ. 26։

Ի գիշերայ կանխէ հոգի իմ
առաւօտ առնել առ քեզ ած։
Վասն զի՝ լոյս են հրամանք քո
'ի վր երկրի. ուսարուք զարդարու
թիւն բնակիչք երկրի։
Կարկեսցի անպարիշտն՝ և այլ ոչ
ևս ուսցի առնել յերկրի զարդա_
րութիւն ճշմարտութե։
Բարձցի ամբարիշտն յերկրէ. և
մի տեսցէ զփառս տն։

Տէր բարձր ես՝ և բազում քո հզօր.
և նոքա ոչ գիտացին։
Օտանիցեն, ամաչեսցեն, և նախանձ
արկցի անխրատ ժողովրդեան. և
արդ հուր զթշնամիս քո կերիցէ։
Տէր ա՟ծ մեր՝ տուր մեզ զխաղաղու
թիւն քո. զի ըստ ա՟մ գործոց մերոց
հատուցեալ մեզ։
Տէր ա՟ծ մեր՝ ստացիր զմեզ. զի բաց
՚ի քէն զայլ ոք ոչ գիտեմք. և զա-
նուն քո անուանեմք զօրհանապազ։
Իսկ արդ՝ մեռեալք զկենդանութի
այլ ոչ տեսանիցեն. և ոչ բժիշկք
յարուցանիցեն։
Մինչ ածեր՝ հարեր՝ սատակեցեր և
ջնջեցեր՝ զա՟մ արու մանուկ ն՟ց։
Յաւել տ՟ր զչար ՚ի վ՟ր չարինց. և
ած զչար ՚ի վ՟ր անօրինաց երկրի։
Տէր ՚ի նեղութե յիշեցաք զքեզ. զի
փոքր մի նեղութի է խրատ քո ՚ի
վերայ մեր։
Որպէս երկունք յղւոյ՝ զի հասանելք
իցեն ՚ի ժամանակս ծննդեան. և
առ ցաւս իւր ձայնիցէ։
Նոյնպէս եղաք սիրելւոյ քում տ՟ր.
յահ և յերկիւղ քո յղացեալ երկնե
ցաք.

ցաք . և ծնաք զհոգի փրկութեան քո .
Ոչ եւս կործանիցուք մեք . այլ կործանեսցին բնակիչք երկրի :
Յարիցեն մեռեալք . և կենդանասցին ամենեքեան . որք եղեալք են 'ի գերեզմանս :
Զարթիցեն , ցնծասցեն , և ուրախ եղիցին դադարեալք յերկրի .
Զի ցօղ որ ցօղի 'ի քէն , այդ բժշկութիւն է նոցա . բայց երկիրն ամբարշտեալ սատակեսցի .
Խոյս տուր ժողովուրդ իմ . գնա մուտ 'ի շտեմարանս քո . և փակեա զդրունս քո առաջի երեսաց քոց .
փախի՛ր և թաքի՛ր առ ժամանակ մի մինչև անցցէ բարկութիւն տեառն :

## Սաղմոս .

Խաղաղութեանց տուօղ քո՝ զխաղաղութիւն և զողորմութիւն քո պարգևեա մեզ .
Մարդասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատի մօր քո և կուսի . և վասն խաչի քո պատուականի ընկալ զաղաչանս մեր . և կեցո զմեզ .

Աղօթք .



ԻԲ Յարութիւն մերոյ փրկչին։

Աղօթք Մովսէսի առն այ։

## Սաղմոս · ՁԹ·

Աղօթ խօսի զկարճութէ այսորիկ կենցաղոյս, և թէ որպէս, և կամ որով ճանապարհաւ պարտիցեմք հոգալ զյաւիտենականն։

ՏՐ. ԱՊԱՒԷՆ ԵՂԵՐ ՄԵԶ յազգէ մինչեւ յազգ · մինչչեւ լերինք հաստատեալ էին, մինչչեւ ստեղծեալ էիր զեր–

զերկիր եւ զա՟մ տիեզերս.
Յաւիտենից մինչեւ յաւիտեանս դու
ես. մի դարձուցաներ զմարդ ի տա
ռապանս. եւ ասացեր. դարձարուք
առ իս որդիք մարդկան.
Հազար ամ՝ յաչս տն ոպ օր երե֊
կի, զի էանց. ոպ պահ մի գիշերոյ.
եւ ամք նց անարգութիւն եղիցին.
Ընդ առաւօտս ոպ դալարի բուս֊
ցին. ընդ առաւօտս ոպ դալարի զուար
ճասցին եւ ծաղկեսցին. ընդ երեկոյս
թարշամեսցին՝ չորասցին՝ եւ անկ֊
ցին.
Նուաղեցաք մեք ի բարկութենէ
քումմէ. եւ ի սրտմտութենէ քում֊
մէ խռովեցաք.
Եդեր զմեղս մեր առաջի քո. եւ զկ
կեանս մեր ի լոյս երեսաց քոց.
Ամենայն աւուրք մեր նուաղեցան.
եւ ի բարկութենէ քումմէ խռովեցաք.
Ժամանակ ամաց մերոց անդա֊
դար ոպ սարդի. եւ թիւ աւուրց
ամաց մերոց ի նոսա եօթանա֊
սուն ամ.
Ապա թէ առաւել եւս՝ ութսուն
ամ. եւ որ ինչ աւելի է քան զայն,
ցա֊

ցաւոք և հեծութեամբ :
Եկն 'ի վե՛ր մեր հեծութի՛ւն, և խրա
տեցաք . իսկարդ՝ ո՞ գիտասցէ զզօ
րութի՛ւն բարկութեա՛ն քո . կա՛մ յահէ
քումմէ, զսրտմտութի՛ւն քո համա
րեսցի :
Այսպէս ցո՛յց ինձ զաջ քո . և որք
խոնարհք են սրտիւք, զիմաստու
թի՛ւս քո :
Դա՛րձ տ՟ր՝ մինչև յե՞րբ . մխիթա
րեա՛ 'ի ծառայս քո :
Լցաք առաւօտու ողորմութե՛ք քով .
ցնծացաք և ուրախ եղաք՝ զա՛մ ա
ւուրս կենաց մերոց :
Ուրախ եղաք փոխանակ աւուրցն,
յորս խոնարհ արարեր զմեզ . և ա
մացն, յորս տեսաք զչարչարանս :
Հայեա՛ց տ՟ր՝ 'ի ծառայս քո՝ և 'ի
գործս ձեռաց քոց . և առաջնոր
դեա՛ որդւոց ն՟ց, եղիցի լոյս տ՟ն
ո՟յ 'ի վերայ մեր :
Զգործս ձեռաց մերոց ուղի՛ղ ա
րա՛ 'ի մեզ տ՟ր . և զգործս ձեռաց
մերոց յաջողեա՛ մեզ :

Անվերնագիր 'ի հեբրայեցւոց օրհնութէ̃ գովութե̃ ։

## Սաղմոս. Ղ ։

Աղօթ խօսի պաշտպանեալ որք փնտրեն պաշտպանութ-եանց առ Ա̃ծ, և տարէն անահ և անխախտանք 'ի փորձութեանց ։

Որ բնակեալ է յօգնութիւն բարձ-րելոյն. ընդ հովանեաւ Ա̃յ երկ-նից հանգիցէ ։
Ասասցէ Տ̃ն. ընդունօղ իմ ես դու ապաւէն իմ Ա̃ծ, և ես յուսամ 'ի նա ։
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որ-սողին. և 'ի բանից խռովութե̃ ։
'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի հովանի թևոց նր̃ յուսասցիս ։
Որ̃պ զզէն շուրջ եղիցի զքև ճշմար-տութի̃ նր̃ ։
Մի երկիցես դու յերկիւղէ գիշե-րի. և ո՛չ 'ի նետէ, որ թռչի 'ի տուէ ։
Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի դայ-թագղութե̃ դիւէին 'ի հասարակ աւուր ։
Անկցին 'ի կողմանէ քումմէ հա-զարք ․

զարք · և բիւրք ընդաջմէ քումմէ ·
և առ քեզ ոչ մերձեսցին ։
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու, և զհատուցումն մեղաւորաց
տեսցես · զի դու Տ̅ր յոյս իմ ես ։
Զբարձրեալն արարեր քեզ ապա-
ւէն · ոչ հասցեն առ քեզ չարք · և
տանջանք մի մերձեսցին 'ի յարկս
քո ։
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ
է վ̅ն քո · 'ի պահել զքեզ յամ̃ ճա-
նապարհս քո ։
Ի բազուկս իւրեանց ընկալցին զ
քեզ · զի մի երբէք հարցես զքարի
զոտն քո ։
Ի վ̅ր իժից և քարբից գնասցես
դու · և առ ոտն կոխեսցես զառ-
իւծն, և զվիշապն ։
Զի անձն յիս յուսացաւ, և փրկե-
ցից զնա · հովանի եղէց նմա · զի
ծանեաւ զանուն իմ ։
Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմ̃ ·
և առ նմա եղէց 'ի նեղութե̃ ։
Փրկեցից և փառաւոր արարից զ
նա · երկայն աւուրբք լցուցից · և
ցուցից նմա զփրկութի̃ իմ ։

Աղ-

Սաղմոս օրհնութեան յաւուրն շաբաթուց.
Անվերնագիր 'ի հեբրայեցւոց.

ՂԱ.

Ձայն յորդորէ զերախտաւորութիւն հատուցել Աստուծոյ տն, վս զօրութեան, իմաստութեան, արդարութեան, և ողորմութեան նր։

*Բարի է խոստովան լինիլ տն. և սաղմոս ասել անուան քում՝ բարձրեալ։*

*Պատմել առաւօտու զողորմութիս քո. և զճշմարտութիւն քո 'ի գիշերի։*

*Տասնաղեաւ սաղմոսարանաւ, 'ի ձայն օրհնութեն գուլէլ։*

*Ուրախ արարեր զիս տր յարարածս քո. և 'ի գործս ձեռաց քոց ցնծացայց։*

*Որպէս զի մեծ են գործք քո տր. և յոյժ խոր են խորհուրդք քո։*

*Այր անզգամ՝ զայս ոչ ծանիցէ. և անմիտն զայս ոչ առնու 'ի միտ։*

*'Ի բուսանիլ մեղաւորաց որպ խոտ. 'ի ծաղկիլ այնոցիկ ոյք գործեն զանօրէնութիւն։*

*Սատակեսցին յաւիտեանս յաւիտենից. և դու բարձրեալ ես յաւիտեանս տր։*

Զի ահա թշնամիք քո տ̃ր․ զի ա֊
հա՛ թշնամիք քո կորիցեն․ ցրուե֊
ցին ամենեքեան՝ որք գործեն զա֊
նօրէնութիւն։

Բարձր եղիցի ո̃պ միեղջերուի եղ֊
ջիւր իմ․ եւ ծերութիւն իմ ՚ի ձէթ
պարարտութե̃։

Նայեսցի ակն իմ ՚ի թշնամիսն իմ,
որք յարուցեալք են ՚ի վ̃ր իմ չա֊
րութե̃բ․ ՚ի նո̃ւ լուիցէ ունկն իմ։

Արդարքն ո̃պ զարմաւենիս ծաղ֊
կեսցին․ եւ որպէս զմայրսն լիբա֊
նանու բազումք եղիցին։

Տնկեալք եղիցին ՚ի տան տ̃ն, եւ ՚ի
գաւիթս ա̃յ մերոյ ծաղկեսցին։

Նա եւ բազումք եղիցին ՚ի ծերու֊
թե̃ն պարարտութե̃․ գիրգք եւ փա
փուկք եղիցին՝ ՚ի պատմել ուղիղ
է տ̃ր ա̃ծ մեր, եւ ոչ գոյ ՚ի նմա
անիրաւութիւն։

Օրհնութիւն գովութեան Դաւթեան աւուրն յառաջ շաբաթուն · յորժամ երկիր հաստատեցաւ · (անվերնագիր ի հեբրայեցւոց ։)

## Սաղմոս · ՂԲ ։

Այս նախագուշակէ զյարութենէ Քէ, և թէ զհետ պարտ էր նմա ելանել յերկինս, և նստել ընդաջմէ հօր, և յղել զառաքեալս ի դարձուցանել զաշխարհ ։

Տէր թագաւորեաց՝ զվայելչութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր զզօրութիւն ընդ մէջ իւր էած ։
Հաստատեաց զաշխարհ զի մի սասանեսցի · պատրաստ է աթոռ քո, ՚ի սկզբանէ յաւիտենից դու ես ։
Ամբարձան գետք Տէր · և ամբարձին գետք զձայնս իւրեանց · և յարիցեն գետք ՚ի գնացս իւրեանց ։
Ի ձայնէ ջուրց բազմաց · սքանչելի եղեն զբօսանք ծովու ։
Սքանչելի ես դու Տէր ՚ի բարձունս · Վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք ։

Տան

Տան քում վայելէ սրբութի՛ն տ͞ր, ընդ երկայն աւուրս:

Սաղմոս ննջեան դաւթի չորեքշաբաթւոյն. (անվերնագիր 'ի հեբրայեցւոց.)

Ղ Գ.

Աղօթ հատուցանէ մեզ թէ որպէս տեսանէ ա͞ծ զերկրայինս, և հոգայ զնոսա, այսպէս արդիւնաւորէ զբարիս, և պատժէ զչարս:

Ա͞Ծ վրէժխնդիր. տ͞ր ա͞ծ՝ վրէժխնդիր յայտնեցար:
Բարձր լեր որ դատես զերկիր. հա_տո՛ զհատուցումն ամբարտաւանից:
Մինչև յե՞րբ մեղաւորք տ͞ր, մինչև յե՞րբ մեղաւորք պարծեսցին:
Բարբառեալ խօսեսցին զանիրաւութի՛ւն. խօսեսցին ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութի՛ւն:
Զժողովուրդս քո տ͞ր խոնարհ ա_րարին. և զժառանգութիւնս քո չարչարեցին:
Զայրին, և զպանդուխտն սպա_նին. և զորբսն կոտորեցին. և ա_սացին ո՛չ տեսանէ զայս տ͞ր. և ո՛չ

՚ի միտ առնու ա՛ծ յակօբայ։
Իմացարուք անդգամք ժողովրդոյ՝
եւ անմիտք, մինչեւ յե՞րբ ոչ առ-
նուք ՚ի միտ։
Որպէս զի թէ որ անկեաց զունկն՝
ինքն ոչ լուիցէ. կամ որ ստեղծ
զակն՝ ինքն ո՛չ տեսանիցէ։
Որ խրատէ զազգս, որպէս թէ ո՛չ
յանդիմանեսցէ. որ ուսուցանէ մար
դոյ զգիտութիւն. տ՟ր ճանաչէ զխոր
հուրդս մարդկան՝ զի են ունայնք։
Երանի մ՟դոյ զոր խրատես դու տ՟ր.
եւ յօրինաց քոց ուսուցանես դու նմա
Ածուցանես դու նմա զաւուրս
չարութեան, մինչեւ փորեսցի խորխո
րատ մեղաւորի։
Ոչ մերժէ տ՟ր զժողովուրդ իւր. եւ
զժառանգութիւն իւր ոչ առնէ անտես
Մինչեւ դարձցին իրաւունք յար-
դարութիւն. ընկալցին զնա ամենե
քեան ոյք ուղիղք են սրտիւք։
Ո՞ յարիցէ ընդ իս ՚ի վ՟ր չարաց. կամ
ո՞ հաւասարեսցի ինձ ՚ի վ՟ր այնո-
ցիկ, որք գործեն զանօրէնութիւն։
Եթէ ոչ տ՟ր օգնէր ինձ, փոքր մի
եւս բնակէր անձն իմ ՚ի դժոխս։

Եթէ

Եթէ ասէի թէ ահա սասանեցան
ոտք իմ, ողորմութի՛ն քո տէր՝ օգնէր ինձ։
Ըստ բազմ ցաւոց սրտի իմոյ՝ մխիթա
րու՛թի քո ուրախ առնէր զանձն իմ։
Մի՛ հաւասարեսցի քեզ աթոռ ա_
նօրէնութե՛, որ պատճառէ զվաս
տակս ընդդէմ հրամանի։
Որսայցեն զանձն արդարոյ. եւ զա_
րիւն անբիծ պարտաւոր առնէին։
Եղեւ տէր ապաւէն իմ. ա՟ծ օգնա_
կան յուսոյ իմոյ։
Հատուսցէ նո՟ց տէր ըստ անօրէնու_
թե՛ն նո՟ց. եւ ըստ չարութե՛ն նո՟ց կոր_
ծանեսցէ զնո՟ս տէր ա՟ծ մեր։

Օրհնութե՟ գովութե՟ երգեան դաւթի.
անվերնագիր ՚ի հեբրայեցւոց։

Սաղմոս. Ղ՟Դ։

Ազդ յորդորէ զմարդիկ գովել զա՟ծ, եւ
հնազանդիլ հրամանի նորին, եւ ոչ խստա
սրտիլ եւ զրկիլ ՚ի նմանէ որպէս
՚ի հնումն յանապատի։

Եկայք ցնծասցուք ՚ի տէր. աղաղա
կեսցուք առ ա՟ծ փրկիչ մեր։
Կանխեսցուք առաջի նր՟ խոստովա

նութբ. սաղմոսիւք աղաղակեսցուք առ նա։

Ած մեծ է. և տր թագաւոր մեծ ի վերայ ամ երկրի։

Ի ձեռս նր են ամ տիեզերք երկրի, և բարձրութիւնք լերանց նր են։

Նր է ծով և նա արար զնա. և զցամաքն ձեռք նր ստեղծին։

Եկայք երկիր պագցուք նմա. անկցուք և լացցուք առաջի տն արարչին մերոյ։

Նա ինքն է տր ած մեր. մեք ժողովուրդք ի ձեռին նր և խաշն արօտի նր։

Այսօր եթէ ձայնի նր լուիջիք, մի խստացուցանէք զսիրտս ձեր որպէս ի դառնութեան։

Յաւուրն փորձութեան յանապատի, ուր փորձեցին զիս հարքն ձեր. քննեցին զիս և տեսին զգործս իմ ըղ քառասուն ամ։

Զանացայ ընդ ազգին ընդ այնմիկ. և ասացի միշտ մոլորեալք են սրտիւք. և նոքա ոչ ծանեան զճանապարհս իմ։

Որպէս երդուայ ի բարկութեան իմում. թէ մտցեն հանգիստ իմ։

Սող.

Սաղմոս երգեան Դաւթի . ՚ի ժամանակին զի տաճարն շինեցաւ յետ գերութեանն . անվերնագիր ՚ի հեբրայեցւոց .

## ՂԵ:

Վասն շնորհաւոր լինել մեզ նորոյ գալստեանն Փրկչին, և նոր հաստատութեան եկեղեցւոյ նորին.

Ընդ ուղխս անցին անձինք մեր. անցին անձինք մեր ընդ ուղխս անդադարս։
Օրհնեալ է տր̃. որ ոչ ետ զմեզ յորս ատամանց նց̃։
Անձինք մեր ապրեցան որ̃ ձնձղուկք. յորոգայթէ որսողաց։
Որոգայթք նոցա փշրեցան. և մեք ապրեցաք։
Օգնութի̃ է մեզ յանուանէ տն̃. որ արար զերկինս և զերկիր։

## Օրհնութիւն Աստիճանաց:

## Սաղմոս. ՃԻԴ.

Աղօթ. ցուցանէ զհաստատութիւն և զհայրա-
նութիւն ապաւինելոյ ՚ի Տր. որոց է
և զհատուցանէ զմեղաւորս,
և զանօրէնս:

Որ յուսայ ՚ի Տր, որպէս լեառն սիոն,
մի սասանեսցի յաւիտեան՝ որ
բնակեալ է յերուսաղէմ:
Լերինք շուրջ են զնովաւ. Տր շուրջ
է զժողովրդեամբ իւրով յայսմհե-
տէ մինչև յաւիտեան:
Ոչ թողու Տր զգաւազան մեղաւո-
րաց ՚ի վիճակս արդարոց. և ար-
դարք մի ձգեսցեն զձեռս իւրեանց
յանօրէնութիւն:
Բարի արա Տր բարեաց. և այնո-
ցիկ. որք ուղիղք են սրտիւք:
Իսկ զխոտորեալսն ՚ի յափշտակութի.
տանի զնս Տր ընդ այնոսիկ որք գոր
ծեն զանօրէնութիւն. խաղաղու-
թի ՚ի վր իսրայէլի:

Օրհ-

## Օրհնութիւն Աստիճանաց։

## Սաղմոս ՃԻԵ

Հաստատութեան [illegible]
[illegible]
եւ հայցէ 'ի Տէնէ [illegible]։

Դարձուցանել տն̃ զգերու-
թի սիօնի, եղաք մեք մխի-
թարեալք։
Յայնժամ լցան բերանք մեր
խնդութբ. եւ լեզուք մեր ցնծութբ։
Յայնժամ ասասցեն 'ի հեթանոսս,
մեծ արար տր̃ զառնել ընդ նս̃.
մեծ արար տր̃ զառնել ընդ
մեզ. եւ մեք եղաք բերկրեալք։
Դարձո տր̃ զգերութիս մեր՝ որպէս
զուղխս 'ի հարաւոյ. որք վարեն
արտասուօք, ցնծութբ հնձեսցեն։
Երթային երթային եւ լային. որք
բարձեալ տանէին զսերմանիս իւր-
եանց։
Գային եկեսցեն, եւ ցնծասցեն. որք
առեալ բերցեն զորայս իւրեանց։

Օրհնութիւն Աստիճանաց ։

## Սաղմոս · ՃԻԶ ։

Աստ յանդիմանէ զայնոսիկ որք ունին ըն-
հոգս մեծամեծս ժողովելոյ և պահելոյ
շէնս ժամանակաւորս թողլով ապաւինե-
լոյ 'ի Տր, և գովէ զայնոսիկ որք ա-
պաւինին, և թողլով մեծի աշխատանաց
շահին շնորհաւն։

Եթէ ոչ Տր շինէ զտուն . 'ի նա-
նիր վաստակին շինօղք նր ։
Եթէ ոչ Տր պահէ զքաղաք . 'ի ու-
նայն տքնին պահապանք նր ։
'Ի նանիր է ձեզ յառնել կանխաւ .
արդ արիք՝ մինչև էք նստեալք .
որք ուտէք զհաց ցաւոց ։
'Ի ժամանակի, ոպ̃ տայցի քուն սի-
րելեաց իւրոց . ժառանգութ̃ի տեառն՝
որդիք են . որոյ վարձք իւր են . այն
է պտուղ որովայնի իւրոյ ։
Ոպ̃ նետք 'ի ձեռս հզօրի . այնպէս
են և որդիք թօթափելոց ։
Երանի, որ ելից զցանկութ̃ի իւր
'ի նոցանէ . մի ամաչեսցեն , յոր-
ժամ

ժամ խօսեսցին թշնամիք նոցա ընդ նոսա առ դրանն:

Օրհնութիւն Աստիճանաց:

Սաղմոս. ՃԻԷ:

Աղօթ սորա գրէ զերջանկութիւն երկիւղածացն այ, և հնազանդողաց նմին, ՚ի հանդերձեալսն, և այլ:

Երանի՜ ամենեցուն՝ ոյք երկնչին ՚ի տնէ. և գնան ՚ի ճնպրհս նր:
Զվաստակս ձեռաց քոց կերիցես. երանի է քեզ, և բարի եղիցի:
Կին քո որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քոյ. և որդիք քո որպէս նորատունկ ձիթենեաց, շուրջ զսեղանով քո.
Այսպէս օրհնեսցի այր մարդ, որ երկնչի ՚ի տնէ. օրհնեսցէ զքեզ տր ՚ի սիոնէ:
Եւ տեսցես դու զբարութիւն երուսաղեմի զամ աւուրս կենաց քոց.
Տեսցես դու զորդիս որդւոց քոց. զխաղաղութիւն ՚ի վերայ իսրայելի:

Օրհ-

# Օրհնութիւն Աստիճանաց ․

## Սաղմոս . ՃԻԸ ։

Աստ պատմէ զհալածանս և զարգելմանս 'ի սկզբան դարձման, և մարգարէանայ զհատուցմանէն այց ․

Բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմմէ. ասասցէ Իսրայէլ ․ Բազում անգամ մարտեան ընդ իս 'ի մանկութենէ իմմէ. և ինձ ոչ յաղթեցին ․ Ի թիկունս իմ հարին մեղաւորք ընդ երկար արարին զանօրէնութիւն իւրեանց ․

Տէր արդար է ․ և խորտակեաց զուղս մեղաւորաց ․

Ամաչեսցեն և յետս դարձցին ամենեքեան՝ որք ատեն զՍիոն ․ Եղիցին նոքա որպէս զխոտ տանեաց ․ որ մինչչև 'ի բուսն եկեալ՝ չորացաւ ․ Որով ոչ ելից զբուռն իւր հնձօղն ․ և ոչ զգիրկս՝ որ զորայն ժողովէր ․ Ոչ ասասցին ամենեքեան որք անցանէին առ նոքօք, թէ օրհնութիւն Տն ընդ ձեզ ․ և օրհնեցաք զձեզ յանուն Տն ․

## Սաղմոս. ՃԻԹ.

Հայր աղաչէ զՏր. աղօթել զինքն և զայլս ՚ի հաւասարմութէ, ՚ի տրտմութէ, և ՚ի յառաջադրութէ յանհաւանելն ՚ի մեղս, և յառաջիկէ աղաւէնել ՚ի Քրիստոսին այ։

Ի խորոց կարդացի առ քեզ Տր՛. Տր՛ լո՛ւր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ՚ի լսել զձայն աղօթից իմոց։

Եթէ զանօրէնութիւնս պահես Տր. Տր՛ ո կարէ կալ առաջի քո. զի ՚ի քէն է քաւութիւն։

Վասն անուան քոյ համբերի Տր. համբերեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ՚ի Տր։

Ի պահէ առաւօտուն՝ մինչև յերեկոյ. ՚ի պահէ առաւօտուն՝ յուսասցաւ Իսրայէլ ՚ի Տր։

Ի Տնէ է ողորմութի բազում. և ՚ի նմանէ է փրկութի. և նա փրկեսցէ զԻսրայէլ յամենեղութեանց նորա։

Օրհ-

## Սաղմոս․ ՃԼ։

Աղօթ համարձակութեն մեծաւ իւրոյ անձ_նութեն [illegible] յոյս էառ ՚ի տր, և յորդորէ [illegible] առնել զնոյն։

Տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ․ և ոչ զռոսան աչք իմ։ Ոչ գնացի ես ընդ մեծամեծս․ և ոչ ընդ այնոսիկ, որք սքանչելի են քան զիս։ Բայց թէ խոնարհեցայ ես՝ ոչ մանուկ սարտուցեալ ՚ի ստենէ մօր իւրոյ․ և դարձնէր անգրէն ՚ի նոյն։ Այլ թէ հպարտացուցի արդեօք զանձն իմ, այսպէս եղիցի հատուցումն անձին իմոյ․ յուսացաւ իս_րայէլ ՚ի տր․ յայսմհետէ մինչև յաւիտեան։

## Սաղմոս . ՃԼԱ ։

Աստ երգէ զգոհութիւն 'ի յանդրադարձութեն
տապանակին 'ի տաճար տն ։ Բազումք
կարծեն զսաղմոսս զայս գոլ սողոմոնի .
Բայց հաստատ է , թէ դաւիթ թողեալ
էջէ զսա սողոմոնի զի 'ի ժամանակի իւ_
րում երգիցէ զսա ։

Յիշեա տր զդաւիթ . եւ զամենայն
հեզութիւն նորա ։
Որպէս երդուաւ տն . եւ
ուխտս եդ այ յակոբայ ։
Թէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ . թէ
ելից յանկողինս մահճաց իմոց ։
Թէ տաց քուն աչաց իմոց . կամ
նինջ արտեւանանց իմոց . կամ հան_
գիստ իրանաց իմոց . մինչեւ գտից
զտեղի յարկի տն այ յակոբայ ։
Ահա լուաք զնմանէ յեփրաթայ .
եւ գտաք զնա 'ի դաշտս մայրեաց ։
Մտցուք 'ի յարկս նորա . եւ երկիրպագ_
ցուք 'ի տեղւոջ ուր կացին ոտք նորա ։
Արի տր 'ի հանգիստ քո՝ դու եւ տա

պա_

պա՛նակ կտակի սրբութե՛ն քո ։

Երիցունք քո զգեցցին զարդարու-
թի՛ւ. և ս՛րբք քո ցնծալով ցնծասցեն
Ս՛ն դաւթի սիրելոյ քո. մի՛ դարձու-
ցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ ։

Երդուեաւ տ՛ր դաւթի ճշմարտութ՛բ
և ոչ ստեաց նմա . ՚ի պտղոյ որո-
վայնի քոյ նստուցից յաթոռ քո ։

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս
իմ. և զվկայութիւնս իմ, զոր ու-
սուցից նց ։

Որդիք նց նստցին յաւիտեանս յա-
ւիտենից յաթոռ քո ։

Հաճեցաւ տ՛ր զ՛ն սիոն. և ընտրեաց
բնակիլ ՚ի նի՛. ասէ այս է հանգիստ
իմ յաւիտեանս յաւիտենից. ՚ի սմա
բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա ։

Օայրիս սորա օրհնելով օրհնեցից.
և զաղքատս սորա լցուցից հացիւ ։

Երիցանց սր զգեցուցից զփրկութի՛
և ս՛րբք սորա ցնծալով ցնծասցեն ։

Ա՛նդ ծագեցից զեղջիւր դաւթի.
պատրաստ արարից ճրագ օծելոյ
իմոյ ։

Թշնամեաց նր զգեցուցից զամօթ.
այլ ՚ի վ՛ր նր ծաղկեսցի սրբութի՛ իմ

Օրհնութիւնք Աստիճանաց։

## Սաղմոս · ՃԼԲ։

Ահա գոհանանէ վշտաբանութեանն, և զխաղաղութեան։

Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ · զի բնակեսցեն եղբարք 'ի միասին։
Իբրեւ իւղ զի իջանէ 'ի գլուխ՝ և 'ի մօրուսն Ահարոնի · և 'ի մօրուսայն իջանէ 'ի գրապանս զգեստու նորա։
Որպէս ցօղ՝ զի ցօղի յաՀերմոնէ 'ի վերայ լերինն Սիոնի։
Տէր անդ պատուիրեաց զօրհնութի՛ւն · և զկեանսն յաւիտենից։

Օրհնութիւնք Աստիճանաց։

## Սաղմոս · ՃԼԳ։

Ահա հրաւիրէ գովել զՏէր։

Արդ օրհնեցէ՛ք զՏէր ծառայք Տեառն զո՞ր · ո՛ կայք 'ի տան Տեառն · և 'ի գաւիթս Աստուծոյ մերոյ։
'Ի գիշերի համբարձէ՛ք զձեռս ձեր 'ի

՚ի սրբութիւն. և օրհնեցէք զտ՟ր։
Օրհնեսցէ զքեզ տ՟ր ՚ի սիոնէ. որ
արար զերկինս և զերկիր։

Ալէլուիայ։

## Սաղմոս. ՃԼԴ.

Աղաւ յորդորէ գովել զա՟ծ վ՟ս բարութեն
և կարողութեն նր՟, զորս և ցուցանէ
՚ի հերարկեցեալս յաշխարհն, և՚ի
ժողովրդեան եբրայեցւոց։

Օրհնեցէք զանուն տ՟ն. օրհնեցէք
ծառայք տ՟ն զտ՟ր. ո՛ կայք ՚ի
տան տ՟ն՝ ՚ի գաւիթս տան ա՟յ մերոյ։
Օրհնեցէք զտ՟ր զի քաղցր է. և սաղ-
մոս ասացէք անուա՛ն նր՟ զի քաղցր է։
Զյակոբ ընտրեաց իւր տ՟ր. և զիս-
րայէլ ժառանգութիւն իւր։
Ես ծանեայ զի մեծ է տ՟ր. և տ՟ր
մեծ է քան զա՟մ կուռս։
Զա՟մ զոր ինչ կամեցաւ և արար
տ՟ր. յերկինս և յերկրի՝ ՚ի ծովս, և
յա՟մ խորս։
Հանէ զամպս ՚ի ծագաց երկրի.
զփայլատակունս իւր յանձրևս ա-

Ի̄ րար.

բար․ և հանէ զհողմ՛ 'ի շտեմարա-
նաց իւրոց։

Նհար զա̃մ անդրանիկսն եգիպ-
տացւոց․ 'ի մարդոյ մինչև յանասուն։

Առաքեաց զնշանս և զարուեստս
իւր 'ի մէջ քո եգիպտոս․ 'ի փարա-
ւոն, և յա̃մ զօրս իւր։

Նհար զազգս բազումս․ և սպան
զթագաւորս հզօրս։

Զսեհոն թագաւոր ամուրհացւոց․
զովգ թագաւոր բասանու․ և զա̃մ
թագաւորութիւնս քանանացւոց։

Ետ զերկիր նց̃ 'ի ժառանգութի̃․
ժառանգութի̃ իսրայելի ժողովր-
դեան իւրոյ։

Տ̃Ր անուն քո յաւիտեան․ տ̃ր յի-
շատակ քո յազգէ մինչև յազգ։

Դատէ տ̃ր զժողովուրդ իւր․ և 'ի
ծառայս իւր մխիթարի։

Կուռք հեթանոսաց ոսկի և ար-
ծաթ են՝ ձեռագործք են որդւոց
մարդկան։

Բերան գոյ՝ և ոչ խօսին․ աչք են՝
և ոչ տեսանեն։

Ականջք են՝ և ոչ լսեն․ և ո՛չ գոյ
շունչ 'ի բերանս նց̃։

Նման նմա եղիցին որք արարին զնոսա․
և ամենեքեան որք յուսացեալ են
՚ի նոսա։
Տո՛ւն Իսրայէլի օրհնեցէ՛ք զՏէր․
տո՛ւն Ահարոնի օրհնեցէ՛ք զՏէր։
Տո՛ւն Ղևեայ օրհնեցէ՛ք զՏէր․ եր֊
կիւղածք Տն օրհնեցէք զՏէր։
Օրհնեալ Տէր ՚ի Սիոնէ․ որ բնա֊
կեալն է յԵրուսաղէմ։
Ալէլուիա։

## Սաղմոս․ ՃԼԵ։

Ալէ յորդորէ գովել զԱծ վասն գործոց
արարածոցն, և վասն հրաշիցն զորս
արար ՚ի յԵգիպտոս։

Խոստովան եղերուք Տն զի
քաղցր է․ զի յաւիտեան է
ողորմութիւն նր։
Խոստովան եղերուք Այն աստու֊
ծոց․ զի յաւիտեան է ողորմութիւն
նորա։
Խոստովան եղերուք Տն տերանց․
զի յաւ։
Արար զնշանս մեծամեծս մի֊
այն․ զի յաւ։
Օր֊

Զերկինս արար իմաստութեամբ իւ-
րով. զի յաւ.

Հաստատեաց զերկիր 'ի վ̃ր ջուրց.
զի յաւ.

Արար զլուսաւորս մեծամեծս. զի
յաւիտ.

Զարեգակն արար իշխանական
տունջեան. զի յաւ.

Զլուսին և զաստեղս իշխանական
գիշերոյ. զի յաւ.

Որ հար զերկիրն եգիպտացւոց անդ-
րանկօք իւրովք հանդերձ. զի յաւ.

Եւ եհան զի̃էլ 'ի միջոյ նր̃. զի յաւ.

'Ի ձեռն բարձր՝ և 'ի բազուկ հզօր.
զի յաւ.

Որ հերձ զծովն մեծ. և բաժանեաց
յերկուս մասունս. զի յաւ.

Եւ անցոյց զի̃էլ ընդ մէջ նր̃. զի.

Ընկղմեաց զփարաւոն և զզօրսն իւր
'ի ծով կարմիր. զի յաւ.

Եւ եհան զժողովուրդ իւր յանա-
պատ. զի յաւ.

Որ հար զազգս մեծամեծս. զի յաւ.

Եւ սպան զթագաւորս հզօրս. զի յաւ.

Զսեհոն թագաւոր ամօրհացւոց.
զի յաւ.

Զովգ թ՟գւոր բասանու․ զի յաւ․

Եւ ետ զերկիր նց՟ ՚ի ժառանգութ՟ի․ զի

Ժառանգութ՟ի իսրայէլի ծառայի
իւրոյ․ զի յաւ․

Յիշեաց զմեզ տ՟ր ՚ի խոնարհութ՟ե
մերում․ զի յաւ․

Եւ փրկեաց զմեզ ՚ի ձեռաց թշնա-
մեաց մերոց․ զի յաւ․

Տ՟այ կերակուր ա՟մ կենդա-
նեաց․ զի յաւ․

Խոստովան եղերուք ա՟յ երկնաւո-
րի․ զի յաւ․

## Սաղմոս Դաւթի ՚ի ձեռն երեմիայի․
## ՃԼԶ․

Աղաղ խօսէ ողբոյապարութե՟ բաժանելոց շնորհաչափաց, և հրէից ՚ի բաբելոնի, որք ձառէին ողբերգս և զօրաւարացն եր-եանց, և խնդրեն զերեծինդրութե՟։

Առ գետս բաբելացւոց․ անդ նստաք, և լացաք․ որպէս յիշե-
ցաք մեք անդ զսիոն․

՚Ի մէջ ուռեաց նց՟ կախեցաք ըզ-
կտակարանս մեր․

Զի անդ հարցանէին զմեզ մեր ըզ
բանս

բանս օրհնութեան . գերեւելաբար մեր
առնալէին զմեզ և ատէին ։
Օրհնեցէք մեզ յօրհնութենէն սիո_
նի . խոկ՝ զխմբդ օրհնեսցուք զօրհ_
նութիս տն յերկիր օտար ։
Թէ մոռացայց զքեզ երուսաղէմ .
մոռասցի զիս աջ իմ ։
Կցեսցի լեզու իմ 'ի քիմս իմ, թէ
ոչ յիշեցից զքեզ , թէ ոչ նախ նուա
դեցից զքեզ երուսաղէմ , սկիզբն
ուրախութեան իմոյ ։
Յիշեա տր՝ զորդիսն եդովմայ . յա_
ւուրսն երուսաղեմի ։
Որք ասէին , քակեցէք քակեցէք .
մինչև 'ի հիմն հասուցէք ։
Դուստր բաբիլոնացւոց թշուառա_
կան . երանի որ հատոյց զհատու
ցումն քո , զոր դու մեզ հատուցեր ։
Երանի որ կալցէ զմանկունս քո .
և եհար զքարի ։

## Սաղմոս Դաւթի . ՃԼԷ ։

Առ գոհանալ լինի զձայ վն մարգա_
րէին նորին ։

Խոստովան եղէց քեզ տր , բո_
լոր սրտիւ իմով . առաջի հրեշտա_

 կաց

կաց սաղմոս ասացից քեզ։
Օ՛ի լո՛ւար զբանս բերանոյ իմոյ.
Երկիրպագից ՚ի տաճար սր̃բ քո. և
խոստովան եղէց անուան քում վս̃
ողորմութե̃ և ճշմարտութե̃ քոյ։
Մեծ արարեր յա̃մի զանուն սր̃բ քո.
յորում աւուր կարդամ առ քեզ,
վաղվաղակի լո՛ւր ինձ. և բազում
արասցես զզօրութի՛ս յանձն իմ։
Խոստովան եղիցին առ քեզ ա̃մ
թագաւորք երկրի. զի լուա՛ն բզ
բանս բերանոյ քո. և օրհնեսցեն
զճանապարհս քո։
Մեծ են փառք տ̃ն՝ բարձր է տ̃ր.
զխոնարհս տեսանէ. և զբարձունս
՚ի հեռաստանէ ճանաչէ։
Եթէ գնացից ես ՚ի մէջ նեղութե̃ց.
կեցուսցես զիս ՚ի բարկութե̃ թշ
նամւոյն։
Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս
աջ քո. և տ̃ր հատուսցէ ընդ իմ։
Տ̃ր ողորմութի̃ քո յաւիտեան. բզ
գործս ձեռաց քոց մի անտես առ_
ներ։

'Ի կատարած ։

## Սաղմոս Դաւթի. ՃԼԸ.

*Այս գոլով շնորհաբերութեան իբր թէ նորա-ոչէ արարչին ամենաշնորհաց, և համառօտ յօժարելով, պատմէ զամենագիտութիւն այ վս՟ երախտեաց իւրոց, և խնդրէ 'ի նմանէ թէ արդեօք ճշմարիտ իցէ ճշմարտութեան նորա ։*

Տէր փորձեցեր զիս և ծանեար զիս. դու ծանեար զնստիլն իմ, և զյառնելն իմ։
'Ի միտ առեր զխորհուրդս իմ'ի հեռաստանէ. զշաւիղս իմ և զլիճանս իմ՝ դու քննեցեր, և զա՛մ՝ ճ̃ղհս իմ՝ յառաջագոյն տեսեր. զի ո՛չ գոյ նենգութի՛ւ 'ի լեզուի իմում։
Ահա դու Տէր՝ ծանեար զյետինս իմ, և զառաջինս իմ. դու ստեղծեր զիս. և եդեր զձեռն քո 'ի վերայ իմ.
Սքանչելի եղև գիտութի՛ւ քո յինէն. զօրացաւ, և ոչ հանդարտեմ առնա։
Յո՞ երթայց ես յոգւոյ քումմէ. կա՛ յերեսաց քոց ես յո՞ փախեայց.
Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես.

Եւ թէ իջանեմ 'ի դժոխս, և անդ
մօտ ես։

Թէ առից զթեւս իմ ընդ առա-
ւօտս. և բնակեցայց յեզերս ծովու։
Սակայն և անդ ձեռն քո առաջնոր-
դեսցէ ինձ. և աջ քո ընկալցի զիս։
Ասացի՝ խաւար ուրեմն արդեօք
ծածկեսցէ զիս. կամ՝ գիշեր փոխա-
նակ լուսոյ փափկութեան իմոյ։
Զի խաւարն 'ի քէն ոչ խաւարեսցի. և
գիշերն որ̃ զտիւ լուսաւոր եղիցի.
և խաւար նր̃ որ̃ զլոյս նր̃։
Դու ստացար զերիկամունս իմ. և
ընկալար զիս յորովայնէ մօր իմոյ։
Խոստովան եղէց քեզ տր̃, զի ահեղ
և սքանչելի ես. սքանչելի են գործք
քո, և անձն իմ սիրեաց յոյժ։
Ոչ թաքեաւ ոսկր իմ 'ի քէն զոր
արարեր 'ի ծածուկ. և կար զօրու-
թե̃ իմոյ ը̃ ստորինս երկրի։
Զանգործս իմ տեսին աչք քո. և
'ի գիրս քո ամենեքեան գրեսցին.
'Ի տուէ մոլորեսցին. և ոչ ոք էր որ
առաջնորդէր նոցա։
Ինձ յոյժ մեծարոս եղեն՝ բարեկամք
քո, ած̃. և յոյժ զօրացան իշխանք նց̃։

Թուե

Թուեսցի զն՟ա և քան զաւազ բազմասցին. զարթեայ, և արդ ը՟ն քեզ եմ։ Թէ սպանանես զմեղաւորս՝ ա՟ծ. արք արեանց, 'ի բաց եղերուք յինէն 'Ի հակառակութի՟ և 'ի նախանձ, առցեն 'ի նանիր զքաղաքս քո։ Ատելիս քո տ՟ր, ատեցի. և 'ի վ՟ր թշնամեաց քոց մաշեցայ։ Յատելութիւն կատարեալ ատեցի զն՟ա, և եղեն ինձ թշնամիք։ Փորձեա՛ զիս ա՟ծ՝ և ծանի՛ր զսիրտ իմ. քննեա՛ զիս՝ և ծանի՛ր զշաւիղս իմ. և տես թէ իցեն անօրէնութիւնք 'ի ճանապարհս իմ. և առաջնորդեա՛ ինձ 'ի ճ՟պրհս քո յաւիտենից։

'Ի չափաւորն։

## Սաղմոս Դաւթի. ՃԼԹ.

Ձայն աղաչէ զա՟ծ ազատել 'ի մարդոյ չարոյ, և ճանաչել 'ի չարագործաց։

Ապրեցո՛ զիս տ՟ր 'ի մարդոյ չարէ. յառնէ անիրաւէ փրկեա՛ զիս։ Որք խորհեցան զանօրէնութի՟ 'ի սիրտս

իւր-

իւրեանց. զոր ո՞մ՝ պատրաստեցան
՚ի պատերազմ։

Երեկեալ զեղջուս իւրեանց ո՛չ զօձի.
և Թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց նց։
Պահեա զիս տր ՚ի ձեռաց մեղաւո-
րի. և ՚ի մարդոյ չարէ փրկեա զիս։
Խորհեցան խափանել զգնացս իմ.
Թաքուցին ամբարտաւանք զորո-
գայթ ինձ։

Լարս ձգեցին յորոգայթ ոտից ի-
մոց. շուրջ զշաւղօք իմովք եդին
ինձ գայթագղութի։

Ասացի՝ տր ած իմ ես դու. ունկն
դիր տր՝ ձայնի աղօթից իմոց։
ՏՐ՝ տր զօրութի փրկութե իմոյ.
հովանի դիր գլխոյ իմոյ յաւուր պատե
րազմի։

Մի՛ մատներ զիս տր ՚ի ցանկութի
մեղաւորաց ոյք խորհեցան վս իմ.
մի՛ ընդ վայր հարկաներ զիս։
Ո՛չ ի մի՛ երբեք բարձրասցին. և խոր
հուրդք նց մի՛ կատարեսցին. վախ-
ճան կատարածի նց վաստակ շր-
թանց իւրեանց ծածկեսցէ զնս։
Արկցես ՚ի վերայ նց զկայծակունս
հրոյ. և կործանեսցես զնս. ՚ի տա

ռա-

ռատրմնայ մի կարասցեն կեալ։
Մարդոյ լեզուանւոյ մի յաջողեսցի ի վ՛երկրի. զայր մեղաւոր, չարիք իւր որսասցեն ի կորուստ։
Ծանեայ, զի առնես տր՝ զդատաստան աղքատի. և իրաւունս տնանկի։
Բայց արդարք գոհասցին զանուանէ քումմէ. և բնակեսցին ուղիղք առաջի երեսաց քոց։

Ի չափաբաժ։

## Սաղմոս Դաւթի ՃԽ։

Աղօթ աղաչէ զած լսել աղօթից իւրոց, և տալ զօգնութիւն բարեպաշտս ձեռնաղաղարելոյ։

Տէր կարդացի առ քեզ՝ և լուր ինձ, նայեաց ՚ի ձայն աղօթից իմոց՝ ՚ի կարդալ իմում առ քեզ։
Ուղղեսցին աղօթք իմ որպէս խունկ առաջի քո տր. համբարձումն ձեռաց իմոց՝ պատարագ երեկոյի։

Դնե՛ք

Դի՛ր տէ՛ր՝ պահապան բերանոյ ի-
մոյ. և դուռն ամուր՝ շրթանց ի-
մոց. զի մի՛ խոտորեսցի սիրտ իմ
բանիւ չարութեան:

Ի՛ պատճառել զպատճառս մեղաց ը̃
մարդս, որք գործեն զանօրէնութի.
և ոչ եղէց կցորդ ընտրելոյ նոցա:

Խրատեսցէ զիս արդարն ողորմու-
թե՛ և յանդիմանեսցէ. իւղ
մեղաւորի մի՛ օծցէ զգլուխ իմ, և
աղօթք իմ՛ 'ի կամս նոցա:

Արգելան մերձ առ վիմին դատա-
ւորք նոցա. լուիցեն բանից իմոց՝ և
քաղցրասցին:

Որպէս թանձրութի հողոյ. զի սփռեալ
է 'ի վ՛ր երկրի. ցրուեցան ոսկերք
նոցա մերձ 'ի դժոխս:

Առ քեզ տէր՝ տէր են աչք իմ. 'ի քեզ
յուսացայ տէր. մի՛ հաներ զհոգի
յինէն:

Պահեա՛ զիս յորոգայթէ, որ թա-
քուցան ինձ. 'ի գայթագղութէ
գործողին զանօրէնութի:

Անկցին 'ի ցանցս նո՛ր մեղաւորք.
միայն եմ՛ ես՝ մինչև անցից:

Ձայ-

Իմաստութիւն Դաւթի. աղօթք, 'ի ժամանակի ուր էր նա յայրի անդ.

## Սաղմոս. ՃԽԱ.

Աղօթ կարդայ առ Տր 'ի բերանոյ Քի գոլով 'ի վերայ խաչին, և կամ 'ի բերանոյ արդարոց 'ի մեծի վտանգի.

Ձայնիւ իմով ես առ Տր կարդացի. ձայնիւ իմով զՏր աղաչեցի.

Սփռեցից առաջի նորա զաղօթս իմ. և զնեղութիւնս իմ առաջի նորա պատմեցից.

'Ի նուաղել յինէն հոգւոյ իմոյ, դու Տր ծանեար զշաւիղս իմ. 'ի ճանապարհ յոր և գնայի, թաքուցին ինձ որոգայթ.

Հայէի յաջմէ՝ տեսանէի, և ոչ ոք ճանաչէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ. և ոչ գտաւ խնդրող անձին իմոյ.

Աղաղակեցի առ քեզ Տր՝ և ասացի, դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց.

Նայեաց Տր յաղօթս իմ, զի ես խոնարհեցայ յոյժ. ապրեցո զիս 'ի հալած-

լածչաց իմոց, զի հզօրք եղեն քան զիս։

ՏԷՐ Հան ՚ի բանտէ զանձն իմ. գո-հանալ զանուանէ քումմէ։

Ինձ սպասեն արդարք՝ մինչև հա-տուսցես ինձ։

Սաղմոս Դաւթի, ՚ի ժամու զի հալածէր զնա աբեսաղոմ որդի նր. ՃԽԲ.

Աղօթ հայցէ զներումն յանցանաց իւրոց. և խնդրէ զշնորհս Հոգւոյն իւր, առ ՚ի բարե-պէս կենդանաւորել։

ՏԷր լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։ Լուր ինձ արդարութեամբ քով, և մի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում. զի ոչ արդա-րանայ առաջի քո ամենայն կենդանի։ Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ՚ի խաւարի որպէս մե-ռեալս յաւիտենից։ Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս։

Յի-

Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամ գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լուր ինձ տէր. զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանեցայ այնոցիկ, որք իջանեն 'ի գուբ։

Լսելի արա ինձ յառաւօտու զողորմութիւն քո. զի ես 'ի քեզ տէր յուսացայ։

Ցոյց ինձ Տէր զճանապարհ յոր գնացից. զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո ինձ առնել զկամս քո. զի դու ես Աստուած իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։

Վասն անուանն քո տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։

Ողորմութեամբ քով սատակեսցես զթշնամիս իմ. և կորուսցես զամենեսին նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ։

## Սաղմոս Դաւթի ընդդէմ Գողիաթու. ՃԽԳ.

Աղաւթ առնէ բաղձմաց յաղթութեանց յաւանէ ի ձռ̅ նր̅ պատերազմ, ուստի շնորհա_կալ լինելով շնորհելոց՝ խնդրէ զօգնութիւն ձռ̅ ներքսայէ։

Օրհնեալ տր̅ ած̅ իմ. որ ուսոյց զձեռս իմ ՚ի պատերազմ. և զմատունս իմ ՚ի ճակատամարտ։
Ողորմութի̅ն իմ և ապաւէն իմ. օգ_նական իմ, և փրկիչ իմ. ապաւէն իմ, և ես յուսամ ՚ի նա, որ հնա_զանդ առնէ զժողովուրդս ը̅ ինև։
Տր̅, ո՞վ է մարդ՝ զի յայտնեցար դու_նմա. կամ որդի մարդոյ՝ թէ հա_մարիս ինչ զնա։
Մարդ նանրոյ նմանեցաւ. և ա_ւուրք նր̅ որ̅ հովանի անցին։
Տր̅, խոնարհեցո́ զերկինս՝ և էջ. մերձեա́ ՚ի լերինս՝ և ծխեսցին։
Փայլատակեա́ զփայլատակունս քո, և խռովեա́ զնս̅. առաքեա́ զն_նետս քո՝ և ցրուեա́ զնս̅։
Առաքեա́ զձեռն քո ՚ի բարձանց, և փրկեա́ զիս ՚ի ջուրց բազմաց. և

ի̅ն ՚ի

'ի ձեռաց որդւոց օտարաց։
Որոց բերանք իւրեանց խօսեցան
զնանրութի. և աջ նց աջ է մեղաց։
Ա՛ծ յօրհնութի նոր օրհնեցից ըզ
քեզ. տասնաղեաւ սաղմոսարա֊
նաւ սաղմոս ասացից քեզ։
Որ տաց զփրկութի թագաւորաց
մերոց. որ փրկելոյն իցէ զդաւիթ
ծառայ իւր 'ի սրոյ չարէ։
Փրկեա՛ զիս՝ և ապրեցո՛ զիս. 'ի ձե֊
ռաց որդւոց օտարաց։
Որոց բերանք իւրեանց խօսեցան
զնանրութի. և աջ նց աջ է մեղաց։
Որոց ուստերք իւրեանց ոպ նորա֊
տունկ հաստատունք են 'ի մանկութե
իւրեանց. դստերք նց զարդարեալ՝ և
պաճուճեալ 'ի նմանութի տաճարի։
Շտեմարանք նց լի՛ են՝ և բղխեն 'ի
միմեանս. խաշինք նց բազմածինք
են՝ և բազմանան 'ի գնացս իւրեանց.
և անդեայք նց պարարտք են։
Ոչ գոյ խրամատութի ցանկոյ նց.
և ոչ աղաղակ 'ի հրապարակս նց։
Երանեցին ժողովրդեան՝ որոյ
այս այսպէս է. նա երանի է ժողո֊
վրդեան, որոյ տր՝ ած է նց։

## Օրհնութիւն Աստուծոյ Դաւթի.
## ՃԽԴ.

*Աղօթք գոհաբանէ վասն յաղագս ամենից արարածոց, և յարաջնութեանց նր։*

Բարձր առնեմ զքեզ Տէր իմ, և
Թագաւոր իմ. և օրհնեմ զա-
նուն քո յաւիտեան՝ և յաւիտեանս
յաւիտենից։
Զօրհանապազ օրհնեցից զքեզ.
և գովեցից զանուն քո, յաւիտեան
և յաւիտեանս յաւիտենից։
Մեծ է Տէր՝ և օրհնեալ է յոյժ. և
մեծութեան նր ոչ գոյ չափ։
Ազգք՝ և ազգք՝ գովեսցեն զգործս
քո. և զզօրութիւն քո պատմեսցեն։
Զմեծ վայելչութիւն փառաց սրբու-
թեան քո խօսեսցին. և զսքանչելիս
քո պատմեսցեն։
Զզօրութիւն ահի քո ասասցեն. և
զմեծութիւն քո պատմեսցեն։
Զյիշատակ բազում քաղցրութեան
քո բղխեսցեն. և արդարութեամբ
քով ցնծասցեն։
Գթած ողորմած է Տէր. երկայնա-
միտ և բազումողորմ։

Քաղցր

Քաղցր է տ՟ր առ ամենեսեան․ և
գթութիւնք ն՟ր ՚ի վ՟ր ա՟մ արարածոց
իւրոց։

Խոստովան եղիցին առ քեզ տ՟ր՝
ա՟մ գործք քո․ և ս՟րբք քո օրհնես-
ցեն զքեզ։

Զփառս արքայութ՟ե քո ասասցեն․
և զզօրութիւն քո պատմեսցեն։

Ծանուցանել որդւոց մարդկան զզօ-
րութիւն քո․ և զփառս մեծվայել-
չութ՟ե քո։

Արքայութիւն քո արքայութիւն ա՟մ
յաւիտենից․ և տէրութիւն քո
յազգէ մինչև յազգ։

Հաւատարիմ է տ՟ր յա՟մ բանս իւր,
և արդար է յա՟մ գործս իւր։

Հաստատէ տէր զա՟մ գայթագ-
ղեալս․ և կանգնէ զա՟մ գլորեալս։

Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան․ և
դու տաս կերակուր նց՟ ՚ի ժամու։

Բանաս զձեռն քո․ և լցուցանես
զամենեսեան բարեաւ կամօք քո։

Արդար է տ՟ր յա՟մ ճանապարհս իւր․
և ս՟ր է յա՟մ գործս իւր։

Մերձ է տ՟ր առ ամենեսեան, որք
կարդան առ նա․ առ ամենեսեան

որք կարդան առ նա ճշմարտութեամբ։
Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տր. աղօթից նոցա լսէ, և կեցուցանէ զնսա։
Պահէ Տր զամենեսեան որք սիրեն զնա. և զամ՟ մեղաւորս սատակէ Տր.
Զօրհնութիւն տն խօսեսցի բերան իմ. օրհնեսցէ ամ՟ կենդանի զանուն սր նր յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։

Ալէլուիայ, անգէայ և զաքարիայ։

## Սաղմոս. ՃԽԵ.

Այս խօսի զողորմութենէ յուսոյ զոր տնէ ոչ ի մարդկէ. և ցուցանէ թէ լաւագոյն է ապաւինել յած, և ի յօգնութենէ նր։

Օրհնեա անձն իմ զՏր. օրհնեցից զՏր ի կեանս իմ. սաղմոս ասացից այ իմոյ՝ մինչև եմ ես։
Մի՛ յուսայք յիշխանս՝ և մի՛ յորդիս մարդկան. զի ոչ գոյ փրկութիւն ի նոսա։
Ելցէ հոգի ի նոցանէ՝ և դարձցին անդրէն ի հող. և յայնմ աւուր կորիցեն ամ՟ խորհուրդք նց։

Երա–

Երանի ազգի՝ որոյ տր ած յակոբայ
օգնական է նր. և յոյս նր՝ ի տր ած է:
Որ արար զերկինս և զերկիր. զծով՝
և զամ որ է՝ ի նս:
Որ պահէ զճշմարտութի յաւիտեան.
և առնէ իրաւունս զրկելոց:
Տայ զհաց քաղցելոց. և արձակէ
զկապեալս տր:
Տր բանայ զաչս կուրաց. և կանգ_
նէ զգլորեալս տր:
Տր սիրէ զարդարս. տր պահէ զպ_
պանդուխտս. զորբս՝ և զայրիս ընդ
դունի տր. և զճանապարհս մե_
ղաւորաց կորուսանէ:
Թագաւորեսցէ տր յաւիտեան, ած
քո սիոն յազգէ մինչև յազգ:

Ալէլուիայ, անգէայ և զաքարեայ.

Սաղմոս. ՃԽԶ:

Այս յորդորէ գովել զած վասն բարեաց դարձմանց, որոյն արժանի է գո_վաբանութէ:

Օրհնեցէք զտր՝ զի բարի է սաղ_
մոս. ածյ մերում՝ քաղցր եղիցի
օրհնութի:

Շինէ զԵրուսաղէմ տր, և զցրու-
եալսն իսրայէլի ժողովէ ։
Բժշկէ զբեկեալ սիրտս · և պատէ
զամ վէրս նց ։
Թուէ զբազմութի աստեղաց · և
զամենեսեան զնս յանուանէ կոչէ ։
Մեծ է տր, և մեծ է զօրութի նր ·
և իմաստութե նր ոչ գոյ բաւ ։
Ընդունի զհեզս տր · և խոնարհ
առնէ զամբարշտաւանս մինչև յեր
կիր ։
Օրհնեցէք զտր խոստովանութբ ·
սաղմոս ասացէք նմա օրհնութբ ։
Որ զգեցոյց զերկինս ամպովք · պատ
րաստ արար զանձրև իւր յերկիր ։
Բուսոյց զխոտ 'ի լերինս, և զդա-
լարի 'ի ծառայութի մարդկան ։
Տայ անասնոց կերակուր . ձագուց
ագռաւուց՝ որք կարդան առնա ։
Ոչ թէ ընդ զօրութիս ձիոյ կամե-
ցաւ տր · և ոչ ընդ բրանս առն
սկայի հաճեցաւ ։
Ը.ՃԼ Հաճեցաւ տր ը երկիւղածս
իւր · և ընդ այնոսիկ, որք յուսան
յողորմութի նր ։

Ալէ-

Ալէլուեայ, անգեայ եւ զաքարեայ։

## Սաղմոս ՃԽԷ։

Ասա յորդորէ զԵրուսաղէմ, եւ զեկեղեցի խորհրդականաւ գերապատուութեամբ գովել զՏր։

Գովեա Երուսաղէմ, զՏր։
Օրհնեա զԱծ քո, Սիովն։
Զի զօրացոյց զնիգս դրանց քոց.
եւ օրհնեաց զորդիս քո ՚ի քեզ։
Որ եդ զսահմանս քո ՚ի խաղաղութի.
պարարտութբ̄ ցորենոյ լցոյց զքեզ։
Առաքէ զբան իւր յերկիր. վաղ-
վաղ ընթանան պատգամք նր։
Դնէ զձիւն ոպ̄ զասր. եւ զմէգ ոպ̄
փոշի ցանեաց։
Արկանէ զսառն ոպ̄ պատառս. ա-
ռաջի ցրտոյ նր ո՞ կարէ կալ։
Առաքէ զբան իւր՝ եւ հալէ զնս.
շնչեսցեն հողմք՝ եւ գնասցեն ջուրք,
Պատմէ զբան իւր յակոբայ. զար-
դարութի եւ զիրաւունս իսրայէլի։
Ոչ այսպէս արար ամ̄ ազգաց ում̄.
եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց
նոցա։

Աղօթք ամբակումայ մարգարէին. Յ:

ՏՕ լուր քո լուայ, եւ երկեայ. տր՝ նայեցայ 'ի գործս քո՝ եւ զարհուրեցայ:

'Ի մէջ երկուց կենդանեացն ծանիցիս դու. 'ի մերձենալ ամացն յայտնեսցիս. եւ 'ի հասանել ժամանակին երեւեսցիս:

'Ի խռովել անձին իմոյ՝ 'ի ժամանակի բարկութեան՝ զողորմութիւն յիշեսցես:

Ա՟Ծ 'ի հարաւոյ եկեսցէ. եւ սուրբն 'ի փառան լեռնէ:

Յայտնեսցէն երկինք զվայելչութիւն փառաց նորա. եւ օրհնութեամբ նորա լցան աշխարհք:

Ճառագայթք նորա 'ի լուսոյ հաստան 'ի նմանէ. եւ եղջիւրք 'ի ձեռին նորա գտան. եւ անդ հաստատեաց զօրութիւն փառաց նորա:

Յերեսաց նորա եկեսցեն հարուածք. եւ զհետ շաւղաց նորա երթիցեն մեծամեծք 'ի թուչնոց:

Նկայ՝

Նկայ՝ և չափեայ զերկիր · հայե_
ցաւ և դիտեայ զհեթանոսս ։
Մերինք հալեցին, և անտառք
վատնեցին · Զանապարհք՝ որք 'ի
սկզբանէն էին, կուրացին · և 'ի
նմանէ դողասցի ամ՟ երկիր ։
Տեսի զբանակս քուշացւոց · խռովե
ցան բնակիչք վրանացն մադիանու ։
Մի թէ 'ի վ՟ր գետոց բարկասցի
դու տ՟ր · կա՟մ սրտմտութի՟ւ քո 'ի վե_
րայ գետոց · կամ բարկութի՟ւն քո
'ի վերայ ծովու ։
Նստեր դու 'ի կառս քո · հեծելութի՟ւն
քո փրկութի՟ւն եղև յելանելն քո ։
Զարթեաւ աղեղն քո · զնետս կա
պարծիցս քոյ աքրուցեր · զգետս
ցրուեցեր · զերկիր դողացուցեր 'ի
սաստկութէ անձրևի, որք անցա
նեն ընդ սա ։
Նդոտնդք աղաղակեցին մեծա_
ձայն · լոյս փայլման արեգական
արգելաւ · և ծագումն լուսնին դա
դարեցաւ ։
Ող 'ի նշոյլս սլաքաց քոց գնասցես ·
և ող 'ի լոյս փայլատակման սրոյ
քոյ ։

Բար_

Նարկութ՟ զարթիցես 'ի մ՟ջ երկրի ·
և դողութ՟ կասցես զհեթանոսս ։

Երևեցար 'ի փրկութի՟ն ժողովրդեան
քո · 'ի փրկել զընտրեալս քո ։

Նետաձիգ եղեր 'ի գլուխս մարդ-
կան ամբարտաւանից · և մինչև
յանդունդս ծովու ընկղմեցան ։

Խնդրեցեր զվրէժ զօրութ՟ք քո՛ 'ի
զօրագլխացն մեղաւորաց · որք յու-
սացեալ էին յանդգնութիւնս իւր-
եանց · զի կերիցեն զաղքատն 'ի գաղտ-
նիս ։

Տուաքեցեր 'ի մ՟ջ ծովու զերիվարս
քո · և խռովեցան յաղթ ջուրք ան-
դնդոց ,

Կայցի ես՝ և դեղան աղիք իմ 'ի ձայ-
նէ բերանոյ իմոյ · եմուտ դողումն
յոսկերս իմ · և ես յանձն իմ խռո-
վեցայ ։

Զայս պահեսցես յաւուր նեղութ՟ ·
ածել 'ի վերայ ազգի ամ՟ի · որք մար-
տնչին ընդ ժողովրդեան քում ։

Թզենի ոչ տացէ զպտուղ իւր · և
յայգւոջ բեր մի՛ գտցի · ձիթենիք
սնասցին · և երկիր մի՛ բուսուսցէ
զդալարի ։

Պա-

Պակասեսցին հօտք 'ի ձմարակաց. և եզինք մի՛ գտցին առ մսուրս ։
Նա 'ի տէր յուսացայ . ցնծացայց՝ և ուրախ եղէց յա̃ծ փրկիչ իմ։
Տ̃ր ա̃ծ եա ինձ զօրութի̃ . և կացոյց զոտս իմ 'ի հաստատութե̃ . 'ի վե-րայ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս . և հանգոյց զիս երագ երագ ։

## Աղօթք ։

Լուր մեզ տէր՝ լուր մեզ ամ̃ենայն՝ ողորմութե̃ . և գթութե̃ քո խնայեա՛ յարարածս քո ։
Մարդասէր տէր վ̃ն սրբուհւոյ ա-նարատի մօր քոյ և կուսի . և վասն խաչի քո պատուականի ընկա՛լ զա-ղաչանս մեր , և կեցո՛ զմեզ ։

Օրհնողն 'ի վերջն ողորմեայն գտցես 'ի 170. երեսն ։

Աղէ-



Ալէլուիայ. անգեայ և զաքարեայ.

## Սաղմոս. ՃԽԸ.

Աստ հրաւիրէ զարարածս երկնաւորս և երկրաւորս, գովել զԱծ բնա_ կանաբար։

Օրհնեցէք զՏր յերկինս. օրհնեցէք զնա ՚ի բար_ ձունս։

Օրհնեցէք զնա ամ՛ հրեշտակք նր. օրհնեցէք զնա ամ՛ զօրութիւնք նր։

Օրհնեցէք զնա արեգակն՝ և լուսին. օրհնեցէք զնա ամ՛ աստեղք՝ և լոյս։

Օրհնեցէք զնա երկինք երկնից. և ջուրք որք ՚ի վերոյ քան զերկինս, օրհնեցէք զանուն Տն։

Զի նա ասաց՝ և եղեն. հրամայ_ եաց՝ և հաստատեցան։

Կացոյց զնս յաւիտեանս յաւիտե_ նից. սահման եդ՝ և ոչ անցցէ։

Օրհնեցէք զՏր յերկրէ վիշապք, և ամ՛ խորք։

Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրիկ. որք առնեն զբանն նր։

Լերինք՝ և ամ՛ բլուրք, ծառք պտ_

ղա_

ղաբերք՝ և ամենայն մայրք։
Գազանք, և ամ՟ անասունք․ սո-
ղունք, և ամ՟ թռչունք թեւաւորք։
Թագաւորք երկրի՝ և զօրք իւրեանց․
իշխանք՝ և ամ՟ դատաւորք երկրի։
Երիտասարդք, և կուսանք․ ծերք,
և տղայք՝ օրհնեսցեն զանուն Տ՟ն։
Զի բարձրացաւ անուն նր՟ միայն․ խոս
տովանութ՟ի նմա յերկինս և յերկրի։
Բարձր առնէ տր՟ զեղջիւր ժողովր
դեան իւրոյ․ օրհնութ՟ի յամ՟ սրբց
նր՟․ յորդւոցն իսրայէլի․ ժողովր-
դեան՝ որ մերձ է առ նա՟։

## Ալէլուիայ։ Սաղմոս․ ՃԽԹ։

Սա յորդորէ յաստուածպաշտութիւն նոր-
օրհնել, նոր գովեսցէ զԱծ։

Օրհնեցէք զտր՟՝ յօրհնութ՟ի նոր․
օրհնութ՟ի նմա յեկեղեցիս սրբց։
Ուրախ ասցի իէլ՟ յարարիչ իւր․
որդիք սիոնի ցնծասցեն ՚ի թագա-
ւորն իւրեանց։
Օրհնեսցեն զանուն նր՟ օրհնութ՟բ․
սաղմոսիւք և օրհնութ՟բ սաղմոս
սասցեն նմա։

Զա-

Հաճի տ՟ր ը՟ ժողովուրդս իւր. և
բարձր արասցէ զհեզս 'ի փրկութ՟:
Պարծեսցին սրբքն փառօք՝ և ցնծա-
ցեն 'ի հանգիստս իւրեանց. և բարձր
արասցեն զա՟ծ բերանովք իւրեանց:
Սուրբք երկսայրիք են 'ի ձեռս նց՟, առ-
նուլ զհատուցումն 'ի հեթանոսաց.
յանդիմանութի մ՟ջ ժողովրդոց:
'Ի կապել զթագաւորս նց՟ կապա-
նօք. զզօրավարս նց՟ ձեռնակապօք
երկաթեօք:
Առնել 'ի նս՟ զդատաստանն գրեալ.
փառք այս՝ են ա՟մ սրբոց նր՟:

## Ալէլուիայ. Սաղմոս. ՃԾ:

Օրհնեցէք զա՟ծ 'ի սրբութ՟ն նր՟.
օրհնեցէք զնա 'ի հաստատու-
թե՟ն զօրութե՟ն նր՟:
Օրհնեցէք զնա 'ի զօրութ՟ն նր՟. օրհ-
նեցէք զնա 'ի բազում մեծութ՟ն նր՟:
Օրհնեցէք զնա 'ի ձայն օրհնութե՟.
օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհ-
նութ՟բ:
Օրհնեցէք զնա ցնծութ՟բ, գովե-
ցէք զնա ուրախութ՟բ.
Օրհնեցէք զնա 'ի բանս քաղցր.
գո-

գովեցէք զնա 'ի բարբառ լսելիս։ Օրհնեցէք զնա 'ի ձայն գոհութե. ամ հոգիք օրհնեցէք զտր։

Այս Սաղմոս ինքնագիր Դաւթի. է արտաքոյ թուոյ, 'ի ժամանակին ... ել նա մենամարտ ընդդէմ գողիաթու, ասացեալ [illegible]. և թվ [illegible]։

Փոքր էի ես յեղբարս իմ, և կրտսեր 'ի տան հօր իմոյ. արածէի զխաշինս հօր իմոյ։ Ձեռք իմ արարին զսաղմոսարան. և մատունք իմ կազմեցին զգործի օրհնութե։

Իսկ արդ ո՞ պատմեսցէ զայս տն իմում. ինքնին տր ինքն լուիցէ զնմ։ Նա առաքեաց զհրեշտակ իւր. և համբարձ զիս 'ի հօտէ խաշանց հօր իմոյ. և եօծ զիս յօծութն իւղոյ իւրոյ։ Եղբարք իմ մեծամեծք և գեղեցիկք. և ոչ հաճեցաւ ընդ նս տր։ Ելի ես ընդդէմ այլազգւոյն, և նզովեցի զկուռս նր. հանի զսուսերն 'ի նմանէ. և հատի զգլուխ նորին. և բարձի զնախատինս յորդւոցն իէլի։

## Օրհնութիւնք երից մանկանցն. Դանիէլի. 3։

Օրհնեալ ես տէր ած հարցն մերոց. օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեան։

Զիրաւունս անցուցեր զայս ամ ը մեզ. արդար ես դու տր, և ամ գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են, և ամ դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութեան ածեր ՚ի վերայ մեր՝ ըստ ամի. և զորինչ ածեր ՚ի վերայ մեր, և քաղաքի սբյ հարցն մերոց երուսաղէմի։

Արդարութ և յիրաւի ածեր զայս ամ ՚ի վն մեր՝ վս մեղաց մերոց։

Անօրինեցաք՝ և յանցեաք ապստամբ լինիլ ՚ի քէն. մեղաք յամի և պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք։

Ոչ պահեցաք և ոչ արարաք՝ որպէս
պատուիրեցեր դու մեզ, զի բա-
րիս գտցուք մեք 'ի քէն։

Արդ՝ զամենայն զոր արարեր՝ և զոր ինչ
ածեր 'ի վերայ մեր, արդար դա-
տաստանաւ արարեր։

Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնա-
մեաց մերոց. անօրինաց՝ խոտից և
ապստամբողաց։

Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի
քան զամենայն երկիր, մատնեցեր զմեզ։

Եւ արդ՝ ոչ գոյ մեզ ժամ բանալ
զբերանս մեր. զի ամօթ և նախա-
տինք եղաք ծառայից քոց և պաշ-
տօնէից։

Արդ մի մատներ զմեզ իսպառ՝ վասն
անուան քո. մի ցրեր զուխտս քո.
և մի 'ի բացեայ առներ զողորմու-
թիւնս քո 'ի մէնջ։

Վասն Աբրահամու սիրելւոյ քո, Իսա-
հակայ ծառայի քո, և Իսրայէլի սրբոյ քո.
Խոստացար նոցա, և ասացեր, բազ-
մացուցից զզաւակ ձեր որպէս զաս-
տեղս երկնից բազմութեամբ. և որպէս
զաւազ առ եզր ծովու։

Եւ արդ տէր նուաղեցաք մեք քան

զնմ՝ ազգս. և եմք տառապեալք յնմ
երկրի այսօր վն մեղաց մերոց։

Ոչ գոյ ՚ի ժամանակի յայսմիկ իշ-
խան, և մարգարէ, և առաջնորդ.
ոչ ողջակէզք պատարագաց. ոչ
խունկք օրհնաց. և ոչ տեղի պատա-
րագս մատուցանելոյ առաջի քո. և
զողորմութիւն գտանել ՚ի քէն։

Այլ անձամբք խոնարհեալ՝ և հոգ-
ւովք տառապանաց, ընդունելի լի-
ցուք մեք, որպէս զողջակէզս խոյոց՝ և
զուարակաց. և որպէս բիւրաւորս գա-
ռանց պարարտաց։

Այնպէս ընդունելի լիցին պատա-
րագք մեր այսօր առաջի քո. զի կա-
տարեալ գտցուք զհետ քո. և չիք
ամօթ յուսացելոցս ՚ի քեզ։

Եւ արդ՝ գամք զհետ քո ամ՝ սր-
տիւք մերովք, երկնչիմք ՚ի քէն, և
խնդրեմք զերեսս քո. որ՝ մի յա-
մօթ առներ զմեզ։

Այլ արա ընդ մեզ ըստ հեզութե-
ան քում, և ըստ բազում ողորմութե-
ան քում. փրկեա զմեզ վն սքանչելեաց
քոց տր. և փառաւորեսցի անուն
քո յաւիտեանս։

Օր-

Յամօթ լիցին ամենեքեան, որք
չարչարեն զծառայս քո․ ամաչեսցեն
լիցին բռնութիւք նց̃․ և ամ̃ զօ_
րութիք նց̃ խորտակեսցին։
Եւ ծանիցեն զի դու ես տր̃ ած̃ մի_
այն՝ որ փառաւորեալդ ես ՚ի վերայ
ամ̃ տիեզերաց։
Օրհնեալ ես դու տր̃ ած̃ հարցն
մերոց․ գովեալ՝ և առաւել բարձ_
րացեալ յաւիտեան։
Եւ օրհնեալ է անուն ո̃ր փառաց քոց․
գովեալ և առաւել բարձրացեալ․
Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց
սրբութե̃ քո․ գովեալ։
Օրհնեալ ես ՚ի վերայ աթոռոյ ար
քայութե̃ քո․ գովեալ։
Օրհնեալ ես որ նստիս ՚ի քրովբէս՝
և հայիս յանդունդս․ գովեալ։
Օրհնեալ ես ՚ի վերայ հաստատու
թե̃ երկնից․ գովեալ։
Օրհնեցէք ամ̃ գործք տ̃ն զտ̃ր․
օրհնեցէք և բարձր արարէք զնա
յաւիտ։
Օրհնեցէք երկինք՝ զտ̃ր․ օրհնե_
ցէք և բարձր արա։
Օրհնեցէք հրեշտակք տ̃ն․ և ջուրք

որ 'ի վերոյ երկնից զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք զօրութիւնք Տ՟ն՝ արե֊
գական և լուսին՝ զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք աստեղք երկնից, անձ
րևք, և ցօղք՝ զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք ամ՟ հողմք, հուր, և
ջեր զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք ցուրտ, և տօթ · ցօղ
և ձիւնաբեր՝ զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք սառն՝ և սարդ, ե֊
ղեամն, և ձիւն՝ զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք տիւք՝ և գիշերք, լոյս՝
և խաւար՝ զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք ամպք, և փայլատա֊
կունք, և երկիր, զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք լերինք, և բլուրք, և ամ՟
բոյսք երկրի՝ զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք աղբիւրք, ծովք, և
գետք զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք կէտք, և ամ՟ կայ֊
տառք, որք 'ի ջուրս · և թռչունք
երկնից՝ զՏ՟ր · օրհ։
()րհնեցէ՛ք գազանք, և անասունք·
և որդիք մարդկան՝ զՏ՟ր · օրհ։
()րհնեսցէ Իսրայէլ զՏ՟ր · օրհնես
ցէ և բարձր արասցէ։
()րհ֊

Օրհնեցէ՛ք քահանայք զՏէր․ օրհ․
Օրհնեցէ՛ք ծառայք Տեառն՝ զՏէր․ օրհ․
Օրհնեցէ՛ք անձինք, և շունչք արդարոց՝ զՏէր․ օրհ․
Օրհնեցէ՛ք սուրբք և խոնարհք սրտիւք՝ զՏէր․ օրհ․
Օրհնեցէ՛ք Անանիա, Ազարիա, և Միսայէլ զՏէր․ օրհնեցէ՛ք և բարձր արարէք զնա յաւիտեան․

Ողջոյն քեզ Մարիամ՝ լի շնորհօք․ Տէր ընդ քեզ․ օրհնեալ ես դու ՚ի կանայս․ և օրհնեալ է պտուղ որովայնի քո Յիսուս․ սուրբ ուհի Մարիամ Մայր Աստուծոյ․ բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս․ այժմ և ՚ի ժամ մահու մերոյ․ Ամէն․



Ա՟ծածին մայր մերոյ փրկչին։

## Օրհնութիւն Սրբոյ Աստուածածնին. Ղուկ. Ա։

Մեծացուսցէ անձն իմ զՏր. եւ ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով։
Այց արար 'ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ. այսուհետեւ երանեսցեն ինձ ամ ազգք.
Արար ընդ իս մեծամեծս Հզօրն. եւ սբ է անուն նր.
Ողորմութի արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց. եւ արար զզօրութի բազկաւ իւրով։
Ցրուեաց զամբարտաւանս 'ի մտաց սրտից. եւ քակեաց զհզօրս յա-

յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս ելից բարութեամբ. և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց իսրայէլի ծառայի իւրոյ. յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր, ընդ աբրահամու, և զաւակի նորա՝ յաւիտեան։

Օրհնութիւն զաքարիայի հօրն յովհաննու մկրտչի. Ղուկ. Ա։

Օրհնեալ տէր աստուած իսրայէլի, որ յայց ել. և արար զփրկութիւն ժողովրդեան իւրոյ։

Յարոյց մեզ զեղջիւր փրկութեան՝ ի տանէ դաւթի ծառայի իւրոյ. որպէս խօսեցաւ բերանով սրբոց՝ որք յաւիտենից մարգարէքն էին։

Փրկութիւն ՝ի թշնամեաց մերոց, և ՝ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց։

Առնել զողորմութիւն առ հարսն մեր, և յիշել զկտակարանս սրբութեան իւրոյ։

Զերդումն, զոր երդուաւ աբրահամու հօր մերոյ. տալ մեզ առանց երկիւղի զփրկութիւն ՝ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբութեամբ՝ և արդա-
րութեամբ առաջի նորա, զամենայն աւուրս
կենաց մերոց:

Եւ դու մանուկ՝ մարգարէ Բարձ-
րելոյն կոչեսցիս. գնասցես առաջի
Տեառն՝ պատրաստել զճանապարհս նորա:

Տալ զգիտութիւն փրկութեան ժողո-
վրդեան նորա. 'ի թողութիւն ամենայն
մեղաց մերոց:

Վասն գթոյ ողորմութեան Աստուծոյ մերոյ,
որով երևեցաւ մեզ արեգակն 'ի
բարձանց, լուսաւոր առնել զխա-
ւար մեր:

Ծագել զլոյս 'ի վերայ այսոցիկ, որք
նստէաք 'ի խաւարի. և 'ի ստուերս
մահու. ուղղել զոտս մեր 'ի ճանա-
պարհս խաղաղութեան:

Աղօթք Սիմէօնի ծերունւոյն. Ղուկ. 2:

Արդ արձակես զծառայս քո տէր
ըստ բանի քում 'ի խաղաղու-
թեան. զի տեսին աչք իմ զփրկու-
թիւն քո, զոր պատրաստեցեր առա-
ջի ամենայն ժողովրդոց:

Լոյս յայտնեցար հեթանոսաց. և
փառք ժողովրդեան քում Իսրայէլի:

Աղօթք

## Աղօթք Մանասէի Թագաւորին։

Տէր մենակալ՝ ա̃ծ Աբրա_
համու՝ Իսահակայ՝ Յա_
կոբայ՝ և զաւակին նոցա ար_
դարոց. ամենակալ որ
թող զմեղս իմ։

Որ արարեր զերկինս՝ և զերկիր,
և զա̃մ զարդ նոցա. ամն։

Որ կապեցեր զծով բանիւ հրամա_
նի քո. փակեցեր զխորս, և կնքե_
ցեր ահաւոր և փառաւորեալ ան_
ուամբ քով. ամն։

Որ ա̃մ ինչ սոսկի և դողայ յերե_
սաց ահի զօրութե քո. ամն։

Անբաւ է մեծ վայելչութի փառաց
օրհնութե քո. և սաստիկ է բար_
կութի սպառնալեաց քոց՝ ի վերայ
մեղաւորաց. անչափ և անքննին են
ողորմութիք աւետեաց քոց. ամն։

Դու տր՝ բարձրեալ՝ գթած, եր_
կայնամիտ, բազումողորմ. և զղջա_
նաս ի վը չարեաց մարդկան. ամն։

Դու

Դու Տէր՝ ոչ եդեր ապաշխարութիւն
վասն արդարոցն՝ Աբրահամու, Իսա-
հակայ՝ և Յակոբայ. որք ոչ մեղան
քեզ. ամէն։

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ
մեղաւորիս. զի մեղայ աւելի քան
զաւազ ծովու. և բազմացան անօ
րէնութիւնք իմ. ամէն։

Ոչ եմ արժանի հայիլ՝ և տեսանել
զբարձրութիւն երկնից, 'ի բազմու
թենէ անօրէնութեան իմոյ. ամէն։

Կորացեալ եմ ես, 'ի բռնութենէ կա
պանաց երկաթից. և ոչ գոյ ինձ
հանգիստ. ամէն։

Բարկացուցի զսրտմտութիւն. և ըզ
չար առաջի քո արարի. կանգնեցի
զպատկեր՝ և բազմացուցի զցա-
սումն. ամէն։

Եւ արդ Տէր՝ խոնարհեցուցանեմ
զծունր սրտի իմոյ և հայցեմ 'ի
քաղցրութենէ քումմէ. ամէն։

Մեղայ Տէր, մեղայ, և զանօրէնու
թիւնս իմ ես ինձէն գիտեմ. ամէն։

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ թող
ինձ Տէր, թող ինձ. և մի կորուսա-
ներ զիս ընդ անօրէնութեան իմոյ. ամէն։

Մի

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տ՟ր,
և մի՛ յիշեր զչարիսն իմ. և մի՛ պար
տաւորեր զիս ընդ իջելոյն ՚ի ներ-
քոյ երկրի չարեօք. ամէն:
Զի դու ա՟ծ՝ ա՟ծ ապաշխարողաց
ես. և յիս ցոյց զբարերարութիւ-
նս, որ անարժան եմ. ամէն:
Կեցուսցես զիս ըստ բազում ողոր
մութե քում. և օրհնեցից զքեզ
զա՟մ աւուրս կենաց իմոց. ամէն:
Զքեզ օ՟ր օրհնեն ա՟մ զօրու-
թիւնք երկնից. և քո են փառք
յաւիտեանս՝ ամէն:
Փառք հօր, և որդւոյ, և հոգ:

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն տէր,
թո՛ղ ինձ զմեղս իմ:
Բազումողորմ՝ տ՟ր, ողորմեա՛ ինձ:
Ա՟ծ քաւեա՛ զիս զմեղաւորս:
Արարիչ իմ և յոյս ա՟ծ, գթա՛ յիս
՚ի մեղուցեալ ծառայս. և ողորմեա՛
ինձ բազմամեղիս:
Ամենօրհնեալ սրբուհի՛ և միշտ
կոյս ա՟ծածին մարիամ. բարեխօ
սեա՛ առ տ՟ր վ՟ն իմ մեղաւորիս:
Ա՟մ ս՟րբք ա՟յ՝ բարեխօսեցէք առ-
հայր

Հայր ՚ի յերկինս վե՜ր մեր մեղաւո-
րացս ։

Վ՛ն՝ որդի ով անոխակալ . ընկա՛լ
զաղաչանս մեր . զի ՚ի քեզ են ա-
պաւինեալ անձինք մեր ։

Յաղթօղ զօրութի՛ւն՝ ո՛վ և կենդա-
նարար՝ և պատուական խաչի՛դ քո
տե՛ր՝ պահպանեա՛ զմեզ ։

Նաւքեա՛ տէ՛ր զհրեշտակ խաղաղու-
թեն քո . որ եկեալ պահեսցէ զմեզ
անխռովս ՚ի տունն և ՚ի գիշերի ։

Ու մարդասիրութե՛ն քո յիշեա՛ ըզ-
մեզ տէ՛ր, յիշեա՛ զմեզ . յորժամ գաս
թագաւորութե՛ն քո, և ողորմեա՛ց մեզ ։

Աղօթք իւրաքանչիւր անձին հաւատացելոյ ՚ի Ք՟ս։ Որ արարեալ է տ՟ն Ներսիսի հայոց կաթողիկոսի։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ, Հա՛յր՝ և Որդի, և Ս՟բ Հոգի. անեղ՝ և անմահ բնութիւն. արարիչ հրեշտակաց, և մարդկան, և ա՟մ եղելոց. ողորմեա՛ քո արարածոցս։

Հաւատով խոստովանիմ, և երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական Ս՟բ Երրորդութիւն և մի ա՟ծութիւն. արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի. հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց՝ և անգիտութեան. և լուսաւորեա՛ զմիտս իմ՚ ՚ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ

քեզ 'ի հաճոյս, և ընդունիլ 'ի քէն
զխնդրուածս իմ. և ողորմեա՛ ինձ
բազմամեղիս։

Հա՛յր երկնաւոր՝ ած ճշմարիտ, որ
առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի
խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ
յերկինս՝ և առաջի քո. ընկա՛լ զիս
ոպ զանառակ որդին՝ և զգեցո՛ ինձ
զպատմուճանն զառաջին՝ զոր մեր_
կացայ մեղօք. և ողորմեա՛ քո ա_
րարածոց, և ինձ բազմամեղիս։

Որդի՛ ած ճշմարիտ, որ խոնար
հեցար 'ի հայրական ծոցոյ, և առեր
մարմին 'ի սբյ կուսէն մարիամայ,
վա՛ս մերոյ փրկութե. խաչեցար՝ և
թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց՝
և համբարձար առ հայր. մեղայ
յերկինս՝ և առաջի քո. յիշեա՛ զիս
ոպ զաւազակն՝ յորժամ գաս ար_
քայութբ քով. և ողորմեա՛։

Հոգի՛ ած ճշմարիտ, որ իջեր
'ի յորդանան, և 'ի վերնատունն.
և լուսաւորեցեր զիս մկրտութբ սբ
աւազանին. մեղայ յերկինս՝ և ա_
ռաջի քոյ. մաքրեա՛ զիս վերստին
ածային հրով քո՝ ոպ հրեղէն լեզ_

ուօք

ռօք զառաքելայն · և ողորմեա՛ ։

Անեղ բնութիւն, մեղայ քեզ՝ մտօք իմովք՝ հոգւով և մարմնով իմով · մի յիշեր զմեղս իմ զառաջինս, վ͞ն անուանդ քում սրբոյ · և ողորմ։

Տեսօղ ամ͞ի, մեղայ քեզ՝ խորհրդով բանիւ և գործով · ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ 'ի դպրութեան կենաց · և ողորմ։

Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութ͞բ՝ և անգիտութ͞բ · թողութիւն շնորհեա մեղաւորիս · զի 'ի ծննդենէ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի ա͞ծութեանդ քո զգայարանօք իմովք, և ամ͞ անդամօք մարմնոյս · և ողորմ։

Ամենախնամ տէր՝ դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո տր՝ ոչ ևս հայիլ յարատ · և ականջաց իմոց, ոչ ախորժել լսել զբանս չարութեան · և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն · և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն · և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն · և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան ·

ի͞գ այլ

այլ ուղղեա՛ զշարժումն ոգւոյ լինել
ըն պատուիրանաց քոց յամէն․ և ող:
ջուր կենդանի քո, զՀուր սիրոյ
քո․ զոր արկեր յերկիր բորբոքեա՛
յանձն իմ․ զի այրեսցէ զախտ
Հոգւոյ իմոյ․ և սրբեսցէ զխիղճ
մտաց իմոց․ և մաքրեսցէ զմեղս
մարմնոյ իմոյ, և վառեսցէ զսէր գի
տուե քո 'ի սրտի իմում․ և ողոր:
Իմաստութի՛ Հօր յն, տուր ինձ
զիմաստութի՛ զբարիս խորհել՝ և
խօսիլ՝ և գործել առաջի քո յամ
ժամ․ 'ի չար խորհրդոց՝ 'ի բանից,
և 'ի գործոց փրկեա՛ զիս․ և ողոր:
Կամեցօղ բարեաց՝ տր կամարար՝
մի՛ թողուր զիս 'ի կամս անձին ի-
մոյ գնալ․ այլ առաջնորդեա՛ ինձ
լինել միշտ ըստ կամաց քոց բարե-
սիրաց․ և ողոր:
Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զար-
քայութի՛ քո․ զոր խոստացար սի-
րելեաց քոց․ և զօրացո՛ զսիրտ իմ
ատել զմեղս․ և սիրել զքեզ մի-
այն, և առնել զկամս քո․ և ողոր:
Խնամօղ յարարածոց՝ պահեա՛ նշա-
նաւ խաչի քո՝ զՀոգի, և զմարմին
իմ

իմ, 'ի պատրանաց մեղաց՝ 'ի փոր-
ձութեանց գիշերոյ, և 'ի մարդոց ա-
նիրաւաց, և յամ վտանգից հոգ-
ւոյ՝ և մարմնոյ. և ողորմ

Պահապան ամի քս՝ աջ քո հովանի
լիցի 'ի վերայ իմ, 'ի տուէ և 'ի գի-
շերի, 'ի նստիլ 'ի տան՝ և 'ի գնալ
'ի ճնպհ, 'ի ննջել՝ և 'ի յառնել. զի
մի երբէք սասանեցայց. և ողորմ

Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, և
լնուս զամ արարածս ողորմութե-
ամբ. քեզ յանձն առնեմ զանձն իմ.
դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս
հոգւոյ և մարմնոյ իմոյ՝ յայսմհե-
տէ մինչև յաւիտեան. և ողորմ

Դարձուցի՛չ մոլորելոց՝ դարձո՛ զիս
'ի չար սովորութեանց իմոց 'ի բարի սո-
վորութիւն. և բևեռեա՛ 'ի հոգի իմ
զսարսափելի օր մահուն, և զերկիւղ
գեհենոյն, և զսէր արքայութեանն.
զի զղջացայց 'ի մեղաց, և գործե-
ցից զարդարութիւն. և ողորմ

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո՛ 'ի
սրտէ իմմէ զարտասուս ապաշխա-
րութեան, որպէս պոռնկին. զի լուացից
զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զել-

լա

լանելըն իմ յաշխարհէս. և ողոր։
Պարգևիչ ողորմութեն՝ պարգևեա
ինձ ուղղափառ հաւատով, և բա_
րի գործով, և ս̃րբ մարմնոյ և արեան
քո հաղորդութ̃բ գալ առ քեզ. և
ողոր։
Բարերար տ̃ր՝ հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս քաղցրութ̃բ
աւանդել զհոգի իմ, և անխռով
անցուցանել ը̃ զչարութի̃ն այսոցն,
որք են ՚ի ներքոյ երկնից. և ողոր։
Լոյս ճշմարիտ ք̃ս՝ արժանաւորեա
զհոգի իմ ուրախութ̃բ տեսանել
զլոյս փառաց քոց ՚ի կոչման ա_
ւուրն. և հանգչել յուսով բարեաց՝
յօթևանս արդարոց՝ մինչև յօր մե
ծի գալստեան քո. և ողոր։
Դատաւոր արդար՝ յորժամ գաս
փառօք հօր դատել զկենդանիս և
զմեռեալս, մի՛ մտաներ ՚ի դատաս
տան ընդ ծառայիս քո, այլ փր_
կեա զիս ՚ի յաւիտենական հրոյն,
և լսել տո՛ւր ինձ զերանաւէտ կո_
չումն արդարոց յերկնից արքայու
թ̃եդ. և ողոր։
Ամենողորմ տ̃ր՝ ողորմեա ա̃մ հա_

ուսուցելոց 'ի քեզ. իմոց և օտարաց՝ ծանօթից՝ և անծանօթից. կենդանեաց և մեռելոց. շնորհեա՛ և թշնամեաց իմոց՝ և ատելեաց ըզթողութի՛ն որ առ իս յանցանաց. և դարձո՛ զնո՛ 'ի չարեացն, զոր ունին ընդ իմ. զի ողորմութեան քում արժանի եղիցին. և ողոր։

Փառաւորեալ տէր ընկալ զաղաչանս ծառայիս քո՝ և կատարեա՛ 'ի բարի զխնդրուածս իմ. բարեխօսութբ սրբուհւոյ ածածնին, և յօհաննու մկրտչին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային, և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին. և սրբոց առաքելոցն՝ և մարգարէից՝ և վարդապետաց՝ և մարտիրոսաց՝ և սրբոց հայրապետաց՝ և ճգնաւորաց՝ և կուսանաց, և ամենայն սրբոց քոց, երկնաւորաց՝ և երկրաւորաց. և քեզ փառք և երկրպագութի՛ անբաժանելի ս՟բ երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղ-

Մաղթանք զօրաւորք՝ ի ՏՐ առհասարակ Գե-
ղերայնոյ, Գրիգորի Նարեկացւոյ
ասացեալ: Բան. ԾԲ:




Ընկալ քաղցրութ° ով ամ
հզօր՝ զդառնացողիս զաղա-
չանս. մատո՛ր գթութ°՝ առ-
ատկառեալս զխնդրս. փարատեա՛
ամենապարտս, զամօթական տխ-
րութիւն. բարձ յինէն ողորմած՝
զանդիմադրելի ծանրութիւն. անջր-
պետեա՛ հնարաւոր՝ զմահացու կր-
թութիւն. սատարեա՛ միշտ յաղթող՝
զխաբողին հաճութիւն. բարձա-
րեա՛ վերնային զմոլեկոյն մառա-
խուղ. կնքեա՛ կեցուցիչ՝ զկորուս-
չին ընթացմունս. ցրուեա՛ ծածկա-
տես՝ զմխեռնողին չար դաւմունս.
խորտակեա՛ անքննելի՝ զմարտողին
զխեցմունս: Տնտղեա՛ քո ան-
ուամբդ՝ զուսանցոյս երդ յարկիս
Պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զառաս
տաղ տաձարիս. գծագրեա՛ քո ա-
րեամբդ՝

ըեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս․
կերպացո՛ զքո նշանդ՝ ՚ի հետս ելից
մաղթողիս․ ամրացո՛ քո աջովդ՝ ըզ
հանդստեանս խշտիս․ մաքրեսցես
՚ի հաղըից՝ զծածկարան անկող_
նոյս․ պահեսցես քո կամօքդ՝ զտա
ռապեալ անձն հոգւոյս․ անխար_
դախ արասցես զքո շնորհեալ շունչ
մարմնոյս․ կացուսցես շրջափակ՝ ըզ
պար զօրուդ երկնայնոյ․ կարդես_
ցես ՚ի դիմի ընդդէմ դիւայն դա_
սու ։ Տուր հանգիստ բերկրութեան
մահահանգոյն նիրհման, ՚ի խո_
րութեան գիշերիս․ բարեխօսութեամբ և
հայցուածովք սրբուհւոյ ծնած_
նին, և ամ՛ ընտրելոց, ամփոփեալ
պարուրեա՛ զպատուհան տեսուենցս,
զգայարանացս իմաստից․ անզար_
հուրելի զեռեզմամբ․ ՚ի ծփական
խռովութեանց․ կենցաղական զբաղ_
մանց․ անրջական երազոց․ խօլա
կանաց ցնորից․ ցյիշատակս քո յու
սոյդ, անմխտանելի պաշտպանեալ,
և սթափեալ վերստին ՚ի ննջմանէ
ծանրութեանց, ամենազգաստ արթ_
նութեամբ, հոգենորոգ զուարթութեամբ,
՚ի

՚ի քեզ արձանացեալ։ Զայս ձայն մաղթանաց, բուրմամբ հաւատոյ, քեզ ամենօրհնեալ Թագաւոր փառաց անճառելի փառաբանողաց. երկնաւորամար խմբից երգակցեալ յերկիրս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամ՝ արարածոց՝ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

## ԱՂՕԹՔ ՎԵՐԱՊԱՏՔ ՏԷՐՆ ԳՐԻԳՈՐԻ։
## Բան. ԽԱ.

Որդի այ կենդանւոյ, օրհնեալդ յամենի. Հօրդ ահաւորի անքննելի ծնունդ. որ անճառանայ առ ՚ի քեն եւ ոչ ինչ. որ ՚ի ծագել անստուերն նշուլից ողորմութեդ քո փառաց, հալին մեղք. հալածին դեւք. ջնջին յանցանք. խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. անցի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախչի խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն.

փարատի մռայլն · սպառի աղջա-մուղջն · փերանայ մութն · գնայ գիշերն · տարագրի տագնապն · չքանան չարիքն · հալածին յուսահատութիւնքն · և թագաւորէ ձեռն քո · ամենակալ քաւիչդ ա̃մի · որ ոչ երկեր կորուսանել զմարդկան հոգիս, այլ կեցուցանել · թող ինձ զանթիւ չարիսն իմ; բազում ողորմութեամբ քո · զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզուգ-նին · 'ի տարր գոյից՝ և յեզր ծա-գաց աշխարհի · սկիզբն ա̃մի՝ և յա̃մի, ա̃մի լրմամբ օրհնեալդ 'ի բարձունս · և քեզ ընդ հօր, և հոգ-ւոյդ սրբոյ վայելէ փառք յաւի-տեանս · Ամէն ·

## Վ.Ա.Խ.Ճ.Ա.Ն.

## Յանէ Սաղմոսաց՝ հաւաքա- ալէո–քէնէց ։

Աղաղակեցէք առ ա̄ծ․ կէ։
աղաղակեցէք առ տ̄ր։ ղԹ։
ապրեցո զիս տ̄ր, զի նուաղ․ ժ̄ա։
ապրեցո զիս տ̄ր, 'ի մարդոյ․ ճլ̄Թ։
առ գետս բաբելացւոց՝ անդ․ ճլ̄զ։
առ քեզ տ̄ր կարդացի, ա̄ծ․ իէ։
առ քեզ տ̄ր համբարձի զանձն․ ի̄դ։
առ քեզ տ̄ր համբարձի զաչս․ ճի̄բ։
ասաց անզգամն 'ի սրտի․ ժ̄գ։
ասաց անզգամն 'ի սրտի․ ծ̄բ։
ասաց տ̄ր ցտ̄ր իմ, նիստ ը̄․ ճԹ։
ասացի թէ պահեցից զճ̄ճս․ լ̄ը։
ասէ անօրէնն մեղանչել ընդ․ լ̄ե։
ա̄ծ ականջօք մերովք լուաք։ խ̄գ։
ա̄ծ ա̄ծ իմ՝ ես առ քեզ։ կ̄բ։
ա̄ծ ա̄ծ իմ՝ նայեա՛ց առ իս։ ի̄ա։
ա̄ծ աստուածոց տ̄ր խօսեցաւ․ խԹ։
ա̄ծ եկաց 'ի ժողովս աստու․ ձ̄ա։
ա̄ծ զիրաւունս քո արքայի․ հ̄ա։
ա̄ծ մեր ապաւէն, և զօրութի․ խ̄ե։
ա̄ծ մերժեցեր, և աւերեցեր․ ծԹ։
ա̄ծ, մտին հեթանոսք 'ի ժա․ հ̄ը

ա̄ծ

ա̃ծ յանուան քում կեցո՛ զիս · ծգ
ա̃ծ յօգնել ինձ նայեաց ։ կթ
ա̃ծ ողորմեա՛ց մեզ · և օրհ · կզ
ա̃ծ, ո՞ քեզ նմանիցի, մի · ձբ
ա̃ծ վրէժխնդիր, տ̃ր ա̃ծ · ղգ
ա̃ծ օրհնութեան իմոյ, մի լռեր · ճը
աստ օրհնեցէք տ̃մ ծառայք · ճլգ

Բազում անգամ մարտեան · ճիը
Բայց միայն՝ ա̃յ հնազանդ · կա
Բանից իմոց ունկն դիր տ̃ր · ե
Բարի է խոստովան լինել ։ ղա
Բարձր առնեմ զքեզ ա̃ծ իմ · ճխդ
Բարձր առնեմ զքեզ տ̃ր ։ իթ
Բղխեաց սիրտ իմ զբան · խդ

Գոհացայց զքեն տ̃ր բոլոր · թ
Գովեա եմ զտ̃ր · ճխե

Դատ արա ինձ ա̃ծ · խբ
Դատ արա ինձ տ̃ր · իե
Դատեա՛ տ̃ր զայնոսիկ՝ որք · լդ

Եթէ արդարև զարդարութի · ծէ
Եթէ ոչ տ̃ր էր առ մեզ · ճիգ
Եթէ ոչ՝ տ̃ր շինէ զտուն · ճիզ
Եկայք ցնծասցուք ՚ի տ̃ր · ղդ
Երանեալ են ամբիծք · ճժը

Երա_

Երանեալ է այր, որ երկնչի. ՃԺԱ
Երանեալ է այր, որ ոչ գնաց. Ա
Երանի ամենեցուն, ոյք եր. ՃԻԷ
Երանի որ խորհի զաղքատն. Խ
Երանի, ում թողութիւն եղեւ. ԼԱ
Երկինք պատմեն զփառս. ԺԸ

Ո՛վ բարի, կամ զի վայելուչ. ՃԼԲ
զի՛ պարծի 'ի չարութեան. ԾԱ
զողորմութիւնս քո տէր. ՁԸ

Ընդէ՛ր խռովեցան հեթա. Բ
Ընդէ՛ր մերժեցեր տծ. ՀԳ

Որքա՞ զի բարի է իղի. ՀԲ
'ի դարձուցանել տն. ՃԻԵ
'ի խորոց կարդացի առ քեզ. ՃԻԹ
'ի կարդալ իմում լուար. Դ
'ի նեղութեան իմում ես առ. ՃԺԹ
'ի տր յուսացայ, որպէս. Ժ
'ի քեզ տր յուսացայ՝ մի. Հ
'ի քեզ տր յուսացայ՝ մի. Լ

Լուարուք զայս ամ ազգք. ԽԸ
Լուիցէ քեզ տր յաւուր. ԺԹ
Լուր տծ աղօթից իմոց յաղա. ԿԳ
Լուր տծ աղօթից իմոց՝ եւ նայ. Կ
Լուր տր յարդարութեան. եւ նայ. ԺԶ

Լո–

Խոնարհեցո՛ տր զունկն քո․ ձե։
Խոստովան եղերուք տն՝ և․ ճդ։
Խոստովան եղերուք տն՝ զի․ ճժէ։
Խոստովան եղերուք տն, զի բ․ ճլե։
Խոստովան եղերուք տն, զի քա․ ճզ։
Խոստովան եղերուք տն, զի քա․ ճե։
Խոստովան եղէց քեզ բոլոր․ ճլէ։
Խոստովան եղէց քեզ բոլոր․ ճժ։
Խոստովան եղիցուք առ քեզ։ հդ։

Ծափս հարէք ամ հեթա․ խզ։

Կեցո՛ զիս ած, զի հասին։ կը

Համեցար տր զերկիր քո․ ձդ։
Համբարձի զաչս իմ․ ճի
Համբերելով համբերեցի տն․ լթ։
Հաւատացի զոր և խօսե․ ճժե։
Հիմունք նր ՚ի լերինս սբս ։ ձզ

Ձայնիւ իմով ես առ տր։ հզ
Ձայնիւ իմով ես առ տր․ ճխա։

Մատուցէք տն որդիք այ․ իը
Մեծ է տր․ և օրհնեալ է․ խէ։
Մի նախանձիր ընդ չարս․ լզ
Մինչև յե՛րբ տր մոռանաս։ ժբ

Յայտ

Յայտնի է 'ի Հրէաստանի. հե։
յարիցէ ա̄ծ, և ցրուեսցին. կէ։
յելանելն իէլի յեգիպտոսէ. ճժգ։
յիշեա̄ տր̄ զդաւիթ, և զա̄մ. ճլա։
յողորմութի՝ և յիրաւունս ։ ճ։

Նայեցարուք ժողովուրդք. հէ։

Ողորմեա՛ց ինձ ա̄ծ, զի կոխ. ծե։
ողորմեա՛ց ինձ ա̄ծ, ողոր. ծզ։
ողորմեաց ինձ ա̄ծ՝ ըս̄ մեծի. ծ։
ո՛ յուսայ 'ի տր̄՝ ո՛չ լեառն. ճիդ։
որ բնակեալ է յօգնութի. ղ։
որ հովուես իէլի՝ նայեա՛ց. հթ։
ո՛չ զի սիրելի են յարկք քո. ձգ։
ո՛չ փափաքի եղջերու. խա։
ունկն դիր ա̄ծ աղօթից. ծդ։
ուրախ եղէ, ոյք ասէին. ճիա։

Պահեա̄ զիս ա̄ծ իմ, զի. ժե։
պատրաստ է սիրտ իմ. ճէ։

Սիրեցի՝ զի լուիցէ տր̄. ճժդ։
սիրեսցես զքեզ տր̄ զօրութի. ժէ։

Տեառն է երկիր լրիւ. ի̲դ։
տր̄ ապաւէն եղեր մեր. ձ̲թ։
տր̄ ա̄ծ իմ 'ի քեզ յուսա. է։

տր̄

տր̃ ա̃ծ փրկութե̃ն իմոյ․ ձէ
տր̃՝ զի բազում եղեն․ գ
տր̃ թագաւորեաց, բարկ․ ղը̃
տր̃ թագաւորեաց, զվայել․ ղբ̃
տր̃ թագաւորեաց՝ ցնծաս․ ղզ̃
տր̃՝ ՚ի զօրութե̃ քում ուրախ․ ի
տր̃ լոյս իմ, և կեանք իմ․ իզ
տր̃ լուր աղօթից իմոց՝ ունկն․ ճխբ̃
տր̃ լուր աղօթից իմոց՝ և աղ․ ճա̃
տր̃՝ կարդացի առ քեզ․ ճխ
տր̃ հովուեսցէ զիս․ և ինձ․ իբ̃
տր̃՝ մի՛ սրտմտութե̃ քով․ լէ
տր̃՝ մի՛ սրտմտութե̃ քով․ զ
տր̃՝ ոչ բարձրացաւ․ ճլ
տր̃՝ ո՞վ կացցէ ՚ի խորանի․ ժդ
տր̃ տր̃ մեր՝ զի՛ սքանչելի է․ ը̃
տր̃ փորձեցեր զիս, և ծան․ ճլը̃

Ցնծացէ́ք առ ա̃ծ, օգ․ ձ
ցնծացէ́ք արդարք ՚ի տր̃ ։ լբ̃

Փրկեա́ զիս ՚ի թշնամեաց․ ծը̃

Քեզ վայելէ օրհնութի̃․ կդ

Օրհնեա́ անձն իմ զտր̃. տր̃․ ճգ
օրհնեա́ անձն իմ զտր̃, և․ ճբ

օրհ․

օրհնեա՛ անձն իմ՝ զտ՟ր, օրհն. Ճխե։
օրհնեալ տ՟ր ա՟ծ իմ, որ ուս. Ճխգ։
օրհնեցէ՛ք զանուն տ՟ն. օրհն. Ճլդ։
օրհնեցէ՛ք զա՟ծ ՚ի սրբութե՟ն. Ճծ։
օրհնեցէ՛ք զտ՟ր ա՟մ ազինք. Ճժզ։
օրհնեցէ՛ք զտ՟ր, զի բարի է. Ճխզ։
օրհնեցէ՛ք զտ՟ր յերկնից. Ճխը։
օրհնեցէ՛ք զտ՟ր յօրհնութի՟ն նոր. Ղե։
օրհնեցէ՛ք զտ՟ր յօրհնութի՟ն նոր. Ղէ։
օրհնեցէ՛ք զտ՟ր յօրհնութի՟ն նոր. Ճխթ։
օրհնեցէ՛ք մանկունք զտ՟ր։ Ճժբ։
օրհնեցից զտ՟ր յա՟մ ժամ. Լգ.

Արդ՝ արձակես զծառայս։ 361
Ես ասացի ՚ի վերանալ. 257
զի հուր բորբոքեցաւ. 125
՚ի գիշերաց կանխէ հոգի. 215
՚ի նեղութե՟ն իմում ես առ. 302
հաստատեցաւ սիրտ իմ. 168
մեծացուսցէ անձն իմ։ 359
նայեցարո՛ւք երկինք. 78
տ՟ր լուր քո լուայ. 344
տ՟ր ամենակալ ա՟ծ։ 362
փոքր էի ես յեղբարս, 351
օրհնեալ ես տ՟ր ա՟ծ. 352
օրհնեալ տ՟ր ա՟ծ իՏ՟լի. 360

օրհն

օրհնեսցուք զտ՟ր, զի ·  36
օրհնեցէք զա՟ծ յօրհ ·  301

Եօթն Սաղմոսք ապաշխարութե՟ն ։

Տէր, մի՛ սրտմտութե՟բ քով։  զ
Երանի՛ ում թողութի եղև ·  լա
Տէր, մի՛ սրտմտութե՟բ քով։  լէ
Ողորմեա՛ց ինձ ա՟ծ, ըստ ·  ծ
Տէր, լուր աղօթից իմոց՝ և ·  ճա
Ի խորոց կարդացի առ քեզ ·  ճիթ
Տէր, լուր աղօթից իմոց ·  ճխբ

